


ԳԱՐԵՎՈՒՄ

# Գիրքն իմ Հեռակար



891.99  
4-54

891.99  
U-54

12 MAR 2011  
<493

4. U R S U L

ԳԻՒՂՆ ԻՄ ՀԵՇՈԱԽՈՐ



Հրատարակութիւն Ամերհօկի

1936

31 JUL 2013

55200

ԲԱՑԱՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Նախապէս «Անհաս Բարձունքներ» անւանած էի ներկա պատմւածքը : Անհրաժեշտ ընդարձակ փոփոխութիւններու հետեւանքով նոր ընթացք ստացաւ այս վիպերգութիւնը : Այս պատճառով «Գիւղն իմ Հեռաւոր» անունը աւելի նպատակայարմար դատ :

Ես աշխատած եմ «Գիւղն իմ Հեռաւոր»ով տալ նախախորհրդային գիւղի կեանքը՝ այնքան հարազատօրէն որքան որ ժամանակի եւ հեռաւորութեան իմ ներկա անջրպետը կրնա թոյլատրել :

Հրապարակային եւ մասնաւոր ընթերցումներու միջոցով այս գործը զանդւածներու քննադատութեան առարկան ըրի եւ խոշոր չափով օդուեցա եղած ընկերական դիտողութիւններէ :

«Զարոյի նամակ»ով հին գիւղը կապեր եմ Խորհ . Հայաստանի լուսաշող իրականութեան :

Յոյս ունիմ որ մօտաւոր ապագային ես կունենամ առիթը երգելու Զարոներու եւ Զէյլաներու հարւածային եւ հերոսական աշխատանքի գիւցազներգութիւնը՝ ներշնչւած Խորհ . Հայաստանի աշխատաւորութեան մեծագործութիւններով եւ փառակեղ վերելըով :

Կ. Ս.



## ԶԱՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ

Թաճկագին Կարո՛, հեռաւոր ընկեր,  
Քե՛զ կոլխոզական բոցավառ ողջո՛յն .  
Կարմիր մարտերու պոետիդ նւէր՝  
Մեր յաղթանակի քափը շառաչուն :

Համոյի որդին — հովիւ Զարո՛ն եմ —  
Քեզ հետ նոյն ցաւոտ գիւղին մէջ ծնած .  
Մեր գլխի վերեւ՝ զրկանիքի բազէն —  
Մի օր կուշտ փորով չոր հաց չի կերած :

Դու վաղ գնացիր Վանա Այգեստան ,  
Ուր քեզ փայփայեց ուազմերգը ծռվի .  
Եւ ուր քաղէ քաղ ինչպէս ուրւական  
Սարսափն էր ելեր՝ ջարդի ու սովի :

Ու ես ալ մեծցա գիւղի ցաւին հետ .  
Եղա գառնարած եւ եղա հովիւ .  
Տեսա ողբ ու լաց ինչպէս վարար գետ  
Եւ աննար կարիք եւ զրկանիք՝ անքիւ :

Տեսա քէ ինչպէս անկուշտ մի վոհմակ —  
Եւ տանիկ եւ քուրդ եւ հայ՝ անխափան  
Կը տրորէին բիրու կրունկի տակ  
Գեղջուկն այդ անբախտ եւ անմիարան :

Դու գիտես Կարո՛, կեանքը մեր դաժան —  
Արիւնով գրւած մի ողբի գիրք էր.  
Գիտես թէ ինչպէս մի օր միարան  
Ելանք դառնալու մենք մեր հողի տէր :

Օրն այդ անմռոաց — ելանք միասին —  
Թէ հայ եւ թէ քուրդ առանց խորութեան .  
Փշեցինք լուծը բեկին եւ ռեսին,  
Դարերով շաշող գերութեան շղթան :



Սեւ անգի նման՝ թեւերով անծիր՝  
Քաղեց այդ օրը պատերազմն ահեղ .  
Մայրերն սկսան մի ողբերգ անգիր,  
Ու կեանքը եղաւ լոկ շիւղ ու տաշեղ :

Ու հրդեհ դարձաւ ցեղային քէնը,  
Գեղջուկը ելաւ գեղջուկ եղրօր դէմ .  
Քակւեցաւ արեան քաց ժապաւէնը,  
Ոչ մէկ քան մնաց կանգուն եւ կամ շէն :

Լալով հեռացանք ես ու որբ Զէյլան  
Մեր մեռելաշատ գիւղէն արիւնու .  
Ծուխը բռներ էր Վանա Այգեստան,  
Երբ այնուեղ հասանք գաղթի առաւօտ :

Անգին մանեակն այդ փերուզ ծովակի ,  
Բնութեան երկնած այդ շեղ քերթւած՝  
Քածին էր հաներ ծուլսի , կրակի  
Բանակը ցարի նահանջի ելած :

Եւ հէֆ ժողովուրդն անոր դարաւոր՝  
Լիած հայրենի իր հողը պայծառ՝

Մի մահապարտի պէս գլուխը կոր՝  
Ինկած էր գաղթի անյայտ նանապարհ :

Ախ , այդ նանապարհն — անծա՛յր գերեզման ,  
Որ օգակ-օղակ վիշապի նման  
Զգւած էր Վանին մինչեւ Երեւան ,  
Սկիզբը՝ արցունք ու մահ էր վախճան՝

Ու մենք ալ նամրէն այդ լացի , արեան  
Հասանք երկիրը խաչապաշտ ցարի .  
Փուեր էր չքնաղ դաշտն Արարատեան  
Որպէս արիւնող մի սիրտ վիթխարի :

Ո՛ւր կար ժամի բակ , լիւած օրանոց —  
Այնուեղ էր ինկած Վանի գաղթական .  
Տնեղէ հալ ու մաշ , կրծքին ցաւ ու խոց ,  
Խոտի պէս փուած օտարի դրան :

Քուն կը մտնէին լուսնակի լոյսով ,  
Աչքերուն՝ քովքը Վանա ծովակին .  
Կ'ելնէին անոնք նոր օրւա յոյսով —  
Սառ դիակներով ծածկած այդ գետին :

Այդ մեծ երկրի մէջ խաչապաշտ ցարի  
Դարձեալ գիւղացին զրկւած ու խեղն էր .  
Եւ կը ծանրանար մի քա՛ր վիթխարի —  
Ու կեանքը բռլոր մի հառաչանք էր :



Եկաւ դաշնակը ինչպէս պատուհաս —  
Գերեզմանափոր բորենու նման .  
Սուզը մեր երկրէն մնաց անպակաս ,  
Եւ մեր դաշտերէն՝ հեղեղներն արեան :

Եղա ես բադրակ, եղա ես բանւոր,  
Բնաւոր քռչուն՝ նետւած հովերուն —  
Ամեն կողմ դիակ, մոայլ ամեն օր,  
Սահմանները՝ ծուխ, սահմաններն՝ արիւն :

Եւ որքա՞ն յանախ՝ ես ու հէգ Զէյլան  
Ցիշեր ենք մեր որբ գիւղը մանկութեան,  
Եւ այն օրերուն տուած երանի  
Երբոր կ'իշխէին բեկն ու հարամի :



Դարերու ցաւով խոցւած մեր հոգին  
Ալ չի հանդուրժեց այսքան զրկանքի .  
Լենին էր վառեր այն կարմիր ուղին՝  
Սովետ կարգերու, կարմիր գալիքի :

Աշո՞ւն էր մոայլ, անծիլ նոյեմբեր .  
Ու մենք դուրս փրբանք փոք-որկի նման,  
Բանւոր գիւղացի — ո՞վ որ զրկւած էր —  
Ո՞վ, որի կեանքն էր տանջանքի մատեան :

Մասիսի դէմը՝ հրեղէն վարդի պէս  
Ելաւ սովետի դրօշակը կարմիր .  
Կարմիր ու հզօր՝ անմար բոցի պէս —  
Շուրջը դարերու աւերն ու մոլուր :

Եւ բազմաչար երկիրն նայիրի  
Ուսէն քօքափեց սուզի պատմունան .  
Պրկեց մեծագործ իր բազուկն արի —  
Ու ելաւ գործի — անհաս կառուցման :

Հզօր ու նարտար ձեռքն այդ բանւորի  
Դուրս հանեց գետերն հունէն դարաւոր .  
Զառ հագան ամուլ դուրն մեր երկի ,

Մեր նոր կենցաղի տօմին ուխտաւոր :

Տրակտո՞րն եկաւ բոցաշունչ վազքով —  
Պողպատէ բաշով այդ հրեղէն ձին .  
Խոպան դաշտերը դարձան ծաղկուն ծո՞վ ,  
Եւ արեւաւոր՝ աղքատ գիւղացին :



Զէյլան ալ ինձ հետ վազուց՝ խանդավառ  
Անդամն է գրւած գիւղի կոլխոզին .  
Մեր պայքա՞րն է լուրջ, բայց ինչպէս պայծառ ,  
Դաշտի բերքառատ, կենսատու գործին :

Փոքրիկ Սոնիկս է իմաս պիոներ ,  
Լենիկս՝ կոմերիտ, Վանիկը՝ զինուր ,  
Շենշող են ինչպէս լոյսի կայաններ ,  
Մեր նոր կենցաղի նման՝ լուսաւոր :

Ու մեր կոլխոզն ալ գիւղերու միշին՝  
Լաւ հարածայնի անունն է շահեր .  
Եւ մենք հերոսի նշանը լանջին՝  
Դիրքի վրա ենք ցորեկ ու գիշեր :

Երբեմն ինչպէս մի ամպ կամ ըստեր ,  
Մեր մտով կ'անցնին գիւղն ու Ազիզ բեկ ,  
Ժամի հին բակը եւ դաշնակ մալզեր ,  
Սովի ու մահի այն մոայլ երէկ :

Որքա՞ն տարբեր է մեր մեծ առօրեան —  
Երկարով, տեմպով եւ երգով վարար .  
Բացւեր է շենք երազի նման  
Լենինեան այս վեհ դարը լուսավառ :

Եւ որպէս արծուի լուսաբեւ երամ

Կը քեւենի ահեղ, անհաս բարձունիներ.  
Ուր մարդը մտիի քեւերով անգամ  
Բարձրութիւնն անոնց չափել չէ կրցեր:

Եւ դեռ մեր դէմն է մի անհուն վերելի,  
Ու բիւր լուսեղէն կատարներ փառֆի,  
Բոնկած անծիր մի նոր արեւելի՝  
Մեր կայծակնաքափ, լուսաշող կեանի:

Սիրելի Կարո՛, շատ երկար կեանի ժեզ,  
Քե՛զ իրէ համբոյր ընկերդ Զարոյէն,  
Քեզ կարմիր բարեւ, կարօտ բոցակէզ  
Մեր լուսահեղեղ, յաղքական երկրէն:

Լաւ ենք ու գրաքք՝ փրքող գարնան պէս.  
Ինչպէս զառ սարէն կարկաչող աղքիւր.  
Զեյլան ու Լենիկն ու Սոնան նոյնպէս  
Քեզի կ'ուղարկեն վառ սէր ու համբոյր: —



Լացով կը կարդամ՝ կրկին ու կրկին  
Ընկեր Զարոյի նամակն այս պայծառ.  
Խնդութեան լացն է բռներ իմ հոգին՝  
Գարնան գետերու հոսումով վարար:

Թող միշտ վա՛ռ շողա արեւի նման  
Շենք անունը անմահ Լենիկնի.  
Թո՞ղ շէն ու դալար անի յալիտեան  
Չգուղ հասակը նոր Հայաստանի:

Իմ արի Զարո, ժե՛զ պիտի երգեմ,  
Եւ մեր մանկութեան գիւղը հեռաւոր.  
Պայքարն այն հզօր՝ զոռ տէրերու դէմ,  
Եւ մեր յաղքութեան օրը փառաւոր:

I  
Վեհ ու շենք է Շատախի գաւառ.  
Գետի երկու ափ ճգւեր են պայծառ  
Այն բարձր սարեր, անտառն ու արօս,  
Դաշտերն այն ոսկի եւ նախիր եւ հօս:

Փարքամ այդ երկիրն, հողը ծաղկազարդ՝  
Վայրագ մեծերու եղեր են աւար.  
Դառըն դասեր է հազար, հազար մարդ  
Մի բուռ տէրերու վայելի համար:

Զինջ ու փրփրակն՝ անհամար տարի  
Գետը հսուեր է զառ ձորերն ի վար.  
Այստեղ գեղջուկը՝ անհաց ու գերի՝  
Ապրեր է նորտի իր կեանի քշւառ:

Վաքսուն ձի՛զ տարի՝ զրկւած ու չարքաշ՝  
Այստեղ ապրեր է եւ՝ Համոն անբախտ.  
Զոր հացի կարօտ, հոգսէն հալ ու մաշ՝  
Կարծեր է այդ է տիրոջ կամքն անխախտ:

Նա օր ու գիշեր անջրդի հողէն  
Ճանկերով հաներ է հազար բարիք.  
Եւ իր ստեղծած բարիքի ծովէն  
Իրեն վիճակւեր է ցաւ ու կարիք:

Մեր Համոն ունէր երեք որդիներ —  
Կարիքով ծնած ու տկլոր մեծցած.  
Զարոն, որ մեծն էր, ժագ ու շիկահեր,  
Ելան կարգեցին գիւղի գառնարած:

Միջնեկն ալ եղաւ հոտագ քեկի տան՝  
Եզներու ետեւ ընկած ամեն օր.  
Պատիկը մնաց իր հօր օգնական  
Եւ աչքի լոյսը իր խեղն պառաւ մօր :

Իսկ մայրը — Սանամ — իլիկ կը մանէր  
Շինելու իրենց տանցւած ջանին շոր.  
Այսպէ՞ս մի ողջ տուն հոգին կը հանէր  
Որ պահէր գլուխն ու խարէր մի փոր :

## II

Զարոն եօթ տարի մնաց գառնարած.  
Զնծաղիկն որ գար, կելնէր սար զողաճ<sup>(1)</sup>—  
Իր հօտը ծաղկուն արօտներ հանած —  
Չորս կողմ հարամի, չարկամ ու գազան :  
Չորս քարի վերէն, զառ խոտի վրէն  
Կը նստէր Զարոն՝ փողն<sup>(2)</sup> առած բերան .  
Ու դալար ձորէն ու դարի ծերէն  
Կիջնէր զրի ափ իր հօտը մերջան<sup>(3)</sup> :

Լօ, լօ, լօ, լօ, լօ, . . .  
Վառ ու կենսատու գարնան արեւուն,  
Կակաջէն կարմրած բարձր սարերուն,  
Հանդէ հանդ ծփուն զմրուխտ ծովերուն,  
Ծաղկով հոտաւէտ մարմանդ հովերուն :

Լօ, լօ, լօ, լօ, լօ, . . .  
Սրսուն ու կայտառ սիրուն գառներուն,  
Աքրշմէ քելով չուռիկ<sup>(4)</sup> ուլերուն,  
Հովւի սրնիք անուշ սոյլերուն,  
Լօ, լօ լալազար գարուն օրերուն :

Եւ շոգ կեսօրին, երբ խոնջ, արեւառ,  
Բեր<sup>(5)</sup> կը հասնէին զիւղի աղջիկներ —  
Ետեւէն շարած հազար ուլ ու գառ —  
Զարոն իր գառներն այնտեղ կը բերէր :

<sup>(1)</sup> Զողաճ — լեռնային ամարանոց

<sup>(2)</sup> Փող — Սրինդ

<sup>(3)</sup> Մերջան — Բուստ

<sup>(4)</sup> Չուռ — Երկար մետաքսանման մազերով այծ

<sup>(5)</sup> Բեր — Ոչխարի ցերեկային հաւաքատեղի, կաթ  
կթելու նպատակով

### III

Լեռներու վրա գիշերը կիշնէր  
Ակունքով բանւած ծածկոցի նման .  
Խշալին անուշ՝ գետը կը հոսէր —  
Լուսնի տակ քակած արծարէ պարան :

Մի ժայռի տակին հօտը մակաղած՝  
Ու հսկա շներ կարգած պահապան՝  
Հովիւն ու Զարոն մէկ մէկու դիմաց  
Կըսէին զրոյց ու երգ գեղջկական :

Հովիւը թիկնեղ մի ծեր էր բարի՝  
Սարերու վրա իր կեանքը ապրած —  
Սարերու նման սէգ ու վիքխարի՝  
Հազար փոքրիկ ու փորձանի տեսած :

Իսկ Զարոն ելած էր որպէս չինար —  
Հազիւ աղւամազ բուսած երեսին .  
Թէեւ հովիւ պէս չէր ապրած երկար —  
Բայց շատ գրկանի էր եղած իր բաժին :

Ունիին անոնի սրինգ հովւական  
Որպէս մենուքեան եւ վշտի ընկեր .  
Եւ աղբիւրներու զինջ զրի նման  
Սրինգէն անոնց սիրտը կը հոսէր :

— Հովիւը որ կա, Զարո՛, որդի զան,  
Զրկած գիւղացու պաշտպանն է ու հայր . —  
Յոգմած մշակին նա է կրւու քան,  
Կը տանի հօտը նամրէն լալազար :

Շուրջըդ գազա՞ն է, գող ու բռնակալ —  
Աչքը գեղցուկի ոչխարին տնկած .  
Անոնի համարձակ կամ դարանակալ —  
Մեր վրա կրնան յարձակիլ յանկարծ :

Բայց ժանի հովիւն ուժ ունի եւ կեանի —  
Նա հօտը անվախ պաշտպանէ պիտի .  
Նա պիտի յիշէ խեղներու զրկանի  
Եւ ժաջ ու հպարտ կուելով մեռնի : —

*5329766*

Կը պատմէր անվերջ կոխւ ու արկած  
Սարերը նետուած չարքաշ իր կեանին .  
Մինչեւ ոք ծաղկէր ոսկի լուսաբաց,  
Եւ հօտը ելմէր ծաղկազարդ նամրէն :

Կը բաժնւէին անոնի կարօտով՝  
Ինչպէս միամօր գառնուկն ու մաքին .  
Մրինգն ածելով՝ ծաղկուն արօտով  
Նորէն բերելու հօտն բերատեղին :



## IV

Սարի զառ լանջին գիւղն էր կծկւած —  
Գետմափոք տմե՛ր — տրտում եւ անհաց .  
Գիւղը՝ լա՛ց, արիսն — գիւղն էր տառապանի ,  
Ուր օրը սարսափ՝ եւ կեանին էր զրկանի :

Տաշւած քարերէ՝ մեծ բերդի նման՝  
Ժամն էր քարարացեր տիրող ու դաժան .  
Այնտեղ Ասոուծոն կամքովն անյեղին՝  
Տէրտէրը կօրինիէր լուծը իշխողի :

Եւ գիւղի վերեւ, մի բլրի կատար  
Բեկի մեծ տունն էր կանգներ վեհափառ —  
Շէն ու ահազին, քարիեռով առատ՝  
Խեղն գիւղի վերեւ քազմեր էր հաստատ :  
Տուն չէր այն կարծես — պատիժ անվախնան՝  
Գիւղացու մէջքին նստած անքաժան .  
Եւ որպէս վիշապ ծածկեր էր արեւ՝  
Ելած աղբիւրի եւ կեանին վերեւ :

Ագահ մի տոհմ էր տունն այդ ժառանգած  
Եւ գիւղն ու դաշտերն այդ լայնատարած .  
Դառն էր դատէր մի ողջ ժողովուրդ  
Պահելու համար տունն այդ անյագուրդ :

Ծնած առաջին զառը — բեկին էր,  
Բեկին էր հարսի առաջին գիշեր .  
Անո՞րն էր բերքի մեծագոյն քածին  
Եւ շատն ու ընտիրն բուրդին ու զաժին<sup>(6)</sup> :

Թի՛ւ, համրանի չունէր հօտն անոր անծայր .  
Անո՞րն էր զուրը եւ արօտն ու սար,  
Ցորենի արտերն հարուստ ու յուռքի —  
Իսկ գեղջկին միայն հողերն անջրդի :



Այդ գիւղը ունէր երկու ժողովուրդ —  
Մէկը՝ հայ գեղջուկն ու միւսն՝ անբախտ քուրդ .  
Երկո՞ւքն ալ տեսած զրկանի անյատակ՝  
Վայրագ տէրերու բիրտ կրունկի տակ :

Երբոր հանդիպէր գայլ, գող կամ ասկեար՝  
Քու՞րդ ես կամ թէ հայ — բնաւ հարց չէր տար .  
Երկուքն ալ զրկւած, թշւառ գիւղացի —  
Վէրքերով հարուստ եւ առանց հացի :

Եւ տէրտէրն ու բեկն ու ուսն ու մոլլան  
Կըսէին երգեր վրէժի ու արեան .  
Որպէս զի համայնքն այդ խեղն ու անհաշտ  
Դառնար կեղեքման լայն ու պարարտ դաշտ :

Շարունակ կախւած մէկ մէկու դէմքէն,  
Նո՞յն վէրքն ստացած նոյն անգուք ձեռքէն՝  
Զէկին գիտեր թէ ո՞րտեղէն, ի՞նչպէս  
Այդ ոյնն էր դիգւեր Արնոս սարի պէս :

<sup>(6)</sup>Գած—Չուռ այծի մետաքսանման մաղը

V

Բերն էր իջեր ոչխարն արդէն  
Կանաչ ճամբէն, գառ արօտէն.  
Գիւղէն հասան օրօր - շորար՝  
Հարսն ու աղջիկ — մի խումբ բերւոր<sup>(7)</sup> :  
Բա՛րկ էր արեւ, ճամբան՝ երկար —  
Փուշ ու փոշի — կածան ու ժար .  
Եկան նստան զրի ափին —  
Գլգլան զրի երգին, ծափին :

Հնչեց փողը, զնգաց ծիծաղ  
Բերւոր խմբէն՝ երգեր ու խաղ .  
Եւ զրգանէն, խոտնցներէն  
Տղաքն եկան բ-րվուալէն :  
Եւ շուրջպարի ելան բոլոր —  
Աղջիկ, տղա մուրադաւոր .  
Այնուն, սարի ազատ լանջին  
Մտիկ տալով սիրո կանչին :

- Մի քելի բորիկ,  
    Եարն' զան,  
    Փուշ կելմի տոտիկ,  
        Եարն' զան .  
    Սարերու ծաղիկ,  
        Եարն' զան,  
    Դո՞ւ ես խորոտիկ,  
        Եարն' զան :
- Ոչխարն է բերին,  
    ա՛յ տղա ,

Կրեմ քուխ մաժին,  
    ա՛յ տղա ,  
Տամեմ սիրողին,  
    ա՛յ տղա ,  
Հնձւոր էն տղին,  
    զա՛ն տղա' :

- Երբամ իստամպոլ,  
    Եարն' զան,  
    Բերեմ մի ջուխս սօլ<sup>(8)</sup> ,  
        Եարն' զան,  
    Հագնես, երբաս բեր,  
        Եարն զան,  
    Տոտիկդ չ'արունէր,  
        Եարն զան :
- Տրեխ կը հագնեմ,  
    ա՛յ տղա ,  
    Լաշակ կը բալեմ,  
        ա՛յ տղա ,  
    Հինա կը դնեմ,  
        ա՛յ տղա ,  
    Քո բոյին մեռնեմ,  
        զա՛ն տղա . . .

Կաք կրելու կը նստէիմ՝  
Կրոցի մէջ բռնած լուսին,  
Երբոր զնգուն ձայնով Զարոն  
Կերգեր յուզիչ «բերիվանոն» :<sup>(9)</sup>

- Բերւոր աղջիկ, մարալ աղջիկ,  
    Դու վառ արեւ ու ծիծաղ ես  
        Լէ լէ լէ լէ լէ լէ :
- Բերւոր աղջիկ, շորոր աղջիկ

Հերիք սիրտըս քոնած դաղես,  
Լէ լէ լէ լէ լէ լէ լէ լէ . . .

Բերւոր աղջիկ, նամչւոր աղջիկ,  
Հաւի ես անհաս, բոցէ կարօս  
Լէ լէ լէ լէ լէ լէ լէ լէ . . .

Բերւոր աղջիկ, նազան աղջիկ,  
Ես քեւ առնեմ քոնեմ քո մօս.  
Լէ լէ լէ լէ լէ լէ լէ լէ . . .

## VI

Զարոն կը սիրէր մի շենգ աղջիկ —  
Աղջատ մի քրտի դուստրը գեղեցիկ .  
Եւ այն սարերու եղնիկի նման  
Թուխ աչքեր ուներ ու շնորհի՝ Զէյլան :  
Գիւղը ամեն մարդ այդ քանը գիտէր  
Թէ հայը քրտի աղջիկն է սիրեր .  
Կրսէին գիւղին փորձանեֆ պիտի գար  
Երէ չի դադրէր սէրն այդ խելագար :  
Եւ պատաւ Սանամ օր ու իրիկուն  
Զերմ խնդիրք կըներ հայու Աստըծուն ,  
Որ խենք Զարոյին խելի ու շնորհի տար  
Եւ նա անպատիւ այդ սէրը մոռնար :  
Խսկ ծերուկ Զնդին՝ անխօս ու մոայլ՝  
Հեռու իր հանդը կերթար ծանրագայլ .  
Որ այն ապերավխտ հողէն ու ժայուն  
Համեր ճամեռուա իր խեղնուկ պարէն :

Երբ կուգար պայծառ ու շոգ միջօրէն՝  
Կերն սուած շալակն ու շարորալէն  
Հանդը կը հասներ շողշողուն Զէյլան .  
Որ հօր աշխարհն էր օրն ու ապագան :  
Զնդու սէրն այնիւն մեղմ էր ու քնիուշ  
Ինչպէս վարդերու բոյրը փաղաքուշ .  
Եւ իրեն նետուած այնքան քուի ու մուր  
իր սրտի խորքը քաղած նա պմուր՝  
Մի ժպոռվ այնքան զերմ ու դիւրեկան  
Որքան հեռացող արեւը աշնան՝  
Կսպառէր տակաւ Զէյլայի դիմաց  
Դեռ մահիւ ճիւնը գլխին չի մաղւած .

(7) Բերւոր—Բեր գացող աղջիկ — կաթնաղջիկ  
(8) Սոլ—Տեղական կարմիր կօշիկ  
(9) «Բերիվանէ»—Քրդական հովհանքութիւն բերւոր  
աղջկա մասին

- Բարո՛<sup>(10)</sup>, մքներ ես ամպոտ օրւա պէս .  
Ի՞նչ ցաւ է արդեօֆ որ կը տանջէ ֆեզ.
- Հասեր է կեանիս տխուր մայրամուտ  
Ու սրտիս պատեր է թախիծն ու մուր :
- Այդ մեր բոլորիս ուղին է դաժան,  
Ի՞նչ է քա ցաւը, ըսէ, բար զան .
- Ինչպէս չի տխրի քո անբախտ բարոն՝  
Դարձեր ենի գիւղի մենի բերնի ծամոն :  
Դու քրտի աղջիկ — նա հայի տղա  
Եկուր այդ սէրէդ վազ անցիր, Զէյլա՛ :
- Թէ հայն ու քուրդը մօրմէ չ'են ծներ .  
Նոյն ջուրն ու հողը մեզ չ'են սնուցեր .  
Մէկսե՛ղ ենի աներ նո՛յն արեւին տակ .  
Լացեր ենի մէկսեղ եւ ըրեր կատակ,  
Խմեր ենի յանախ միեւնոյն թասէն,  
Կծեր նոյն խնձոր մէկ մէկու ձեռքէն :
- Բայց նա գեավո՛ւր է — իսկ դու մուսուլման . .
- Թող այդ մտածեն տէրտէրն ու մոլլան .  
Ցիշիր մօրս մահը այն ճմրան բուքին .  
Եւ մի սեւցներ քո անպարտ հոգին :  
Ի զուր մենի լալով դոնէ դուռ ընկանի —  
Մեներ էր մայրս — եւ չկար պատանի .  
Եղբայրդ անգամ ծաղրեց մեր ցաւը .  
Ո՛չ ո՛վ մեզ տւաւ այդ թիգ կտաւը :
- Զէյլա, մի դպիր այդ անբուժ վէրքին,  
Մի՛ բանար թաղւած այդ խոցը կրկին :
- Դուրսն էր սաստիկ բուժ ու տումն՝ անկրակ —

Կը դողայինի մենի եւ ձէքի նրագ,  
Երբ Զարոն եկաւ տժգոյն եւ յուղած .  
Նա փորձեց խօսիլ ու բուռն եեկեկաց .

«Անբաժին եկար — կերքաս անպատանիք —  
«Քո ետեւ թռած միայն տառապանի . . .»

Ըստ եւ սեղմեց բոռւնցքն իր հուժկու  
Կարծես երեսին մի գոռ թշնամու .  
Վար դրաւ ապա կտակի կապոց —  
Գնա՛ց — ու սրտիս մէջ վառեց մի բոց . . .  
Նա ձմբան ցրտին անշապիկ մնաց,  
Որ մայրս գերեզման չերքար նախատւած .  
Նա այն գեավուրն է, այն սարի չորսն  
Այն շենդ Զարոն — իմ եարն աննման :

Իմ անբախտ մայրը միշտ ինծի կըսէր —  
«Երանի Զարոն քո եղբայրն լինէր»:  
Բայց ես բախտաւոր եմ հազար անգամ,  
Որ նա ինձ եղբայր չէ կամ ազգական .  
Այլ իմ վառ սրտի մէկ հատիկ սիրած  
Եւ քաջի նման իմ սրտին տիրած .  
Թէ մեր դէմ հանեկ ամբողջ մի բանակ —  
Նորէն մե՛նի պիտի տանինիք յաղթանա՛կ . . .

Մեռնիմ աչքերուդ, դու մի՛ լար Զէյլա,  
Մօրդ գերեզման թող լինի վկա,  
Ո՛վ ինձ չար խօսի ձեր սիրո մասին  
Ինձ հետ հող պիտի դնեն միասին :  
Ապրի՛ ձեր սէրը, եղէ՛ բախտաւոր,  
Եղէ՛ դուժ անխոց, եղէ՛ միշտ հզօր,  
Եւ ձեր վառ սիրով թող որ հայն ու քուրդ  
Դառնան սրտակից երկու ժողովուրդ :

(10) Բարո՛ — Քրդերէն հայրիկ

## VII

Գիշերն էր ճգւեր քովիչ ու պայծառ՝  
Արևոս սարերուն՝ աստղահիւս կամար .  
Այնտեղ, մի գլուխ աղբիւրի ակին  
Գիւղի հայ մեծերն հաւաքւեր էին :  
Եկեր էր հայդուկ մի խումբ զինավառ՝  
Գիւղի հայերը զիմելու համար .  
Եկեր էր ռեսը, տէրտէրն էր եկեր —  
Այնտեղ էր գիւղի ամեն ազգասէր :  
  
Խմբավետն ելաւ փափախը գլխին՝  
Եւ ուսէն կախած շողշողուն մոսին .

— Եղրայրնե՞ր, կանչեց, դեռ քա՞նի տարի  
Գազան թիւրքին ձեռք մենք մնանք գերի :  
Ռումենն ու բոլգարն, յոյնն ելան ոտքի,  
Փշրեցին լուծը արիւնու թիւրքի .  
Լոկ մե՞նք մնացինք գերի ու քշւառ՝  
Մեր ինչքն ալ քողած քրդերուն աւար :  
Զարկինք Խանասոր, քանիդ ելաւ Սասուն,  
Աշխարհը հնչեց հայդուկի անուն .  
Մենք ուժով առինք բանկը Օտոուման —  
Հայերուս հոչակ ցնցեց Եւրոպան :  
Ոտքի կը կանգնին Մո՞ւշ, կարին ու Վան,  
Ըռուսը կուգա մեզի օգնութեան .  
Եւ մեր քաջերու արդար արիւնով  
Կառնենք Հայաստան ծովի մինչեւ ծով :

Յուզմունքի ծով էր որ ելաւ կարծես .  
Կուրծքերն ուղեցան մէկ մէկ սարի պէս .

Տէրտէրն յուսավառ եւ զերմ կաղօքէր,  
«Հայի Ասուա՛ծը ձեզ պահէ, քաջե՞ր . . .»

Եւ շարունակեց հայդուկը կրկին .

— Քսա՞ն հրացան ձեր գիւղի բաժին —  
Թող եզներ ծախէ, ով որ եզ ունի,  
Ոչխար քող ծախէ, ո՞վ որ ե՞զ չունի,  
Թող ցորե՞ն ծախէ, ով չունի ոչխար  
Եւ զնի իրեն մի զէնք փրկարար .  
Զեր հոգուն մեռնիմ, ճմեռը չեկած՝  
Թող այս իմ պատէրն լինի կատարւած :

— Դո՞ւ անհոգ կեցիր, հերոս անվեհեր,  
Զայնեցին ռեսը, քաջերն ու տէրտէր,  
Կեցցէ՛ հայ բանակն ու ազատութիւն,  
Կեցցէ հայոց մեծ յեղափոխութիւն . . .

— Խմբավե՞տ, ըսաւ հովիւն ալեւոր,  
Դպրոց չեմ տեսած եւ չեմ կարդացաւոր .  
Գուցէ ա՛յդ է որ խելքս չոբանի  
Զի հասնիր երբէք այդպիսի բանի :  
Երկի՞րն այս, որ շատ, շա՞տ հին ժամանակ  
Հայոց արքայի հողն էր անքանակ,  
Ճիմա կը պահէ երեք ժողովուրդ —  
Մէկը՝ մեր հայը եւ տանիկն ու քուրդ :  
Կըսն որ ծանր է լուծը օսմանի,  
Որ մենք կը դատենք — թիւրքը կը տանի .  
Բայց ես տեսեր եմ — ամենքն են քշւառ —  
Ո՞վ որ գեղջուկ է եւ զրկած ռենչքար :  
Կը տան ծանր հարկի, պարտքի տակ —  
Բոլորն անօքի եւ ձեռքը դատարկ .  
Մինչ անոնց անվերջ արիւն — քրտինքէն  
Հանդերը կարմիր կակաջ հագեր են :

ՄԵ՛Կ է մեր տափը, մԵ՛Կ է մեր վարը .  
 ՄԵ՛Կ է մեր ցաւը — մԵ՛Կ է մեր նարը ,  
 ինչո՞ւ վեր առնենք զէնք մէկմէկու դէմ .  
 ինչո՞ւ մենք վառենք նոր կոիւ ու ֆէն :  
 Մեր քշնամին են բեկն ու հողատէր —  
 Տաճիկ մեծաւորն ու հայ փողատէր .  
 Խսկ ամեն ազգի մշակն ու ռենջրար —  
 Մեզ՝ զէնքի ընկեր ու դատի՝ եղբայր :  
 Որի՞ն է երկիրն ու որի՞ն կուտաֆ .  
 Մեր ինչի՞ն են պէտք տէրութիւն եւ փառք —  
 Երբ նորէն մտած քրտինք ու արիւն ,  
 Նոյն հարկն պիտի տանք մեր հայ տէրերուն :  
 Մեծերու կոի՛ւն է այս, իմ աղբեր,  
 Բռներ մեզ խեղներս ալ մէջն են քաշեր —  
 Որ ի՛նչ է ելնենք ու ջարդենք զիրար  
 Տէրերու շահի եւ փառքի համար . . .

Լուց Հովհիւր . իր պարզուկ խօսիեր  
 Դաշոյնի նման ումանց էր դպեր .  
 Խմբապետն՝ կրքէն յուգուած կը դողար .  
 Խսկ ռեսը տեղէն ցատկեց դողահար .

— Ամօր քեզ, հովի՛ւ, ներմակ մազերուդ .  
 Ամօ՛ր է, քեզի պահիր այդ լեզուդ .  
 Պատրաստ ունեցիր գառան խորոված —  
 Ճշաց ռես Յովան սաստիկ կատաղած :

Շա՛տ շատեր կային ծեր հովիւն հաւան .  
 Բայց վախէն չելաւ մէկ ծպտուն ու ձայն .  
 Զարո՞ն էր միայն որ անվախ զոռաց .  
 «Ճիշդ է մեր հովիւ ամեն մէկ ասած —  
 Ամօ՛ր մեր ռեսին, եւ ամօր աննց,  
 Որ այստեղ կտրեր են կրակ ու բոց .  
 Խսկ բեկի առաջ կը դառնան կատու  
 Քանդելու համար տունն անտէր մարդու :

— Լոփի՛ր, սրիկա, լոփի՛ր անզգամ .  
 Այդ անզուսպ լեզուդ կտրել պիտի տամ .  
 Դո՞ւ քրտի աղջկա լկոի սիրահար ,  
 Դո՞ւ անօթի շո՞ւն, դու անխելք տաւար . . .

Զարոն վեր ցատկեց առիւծի նման .  
 — Կը պատուեմ, ըսաւ, այդ աղտոտ բերան .  
 Դո՞ւ վախսկու ըստրուկ եւ լիբր կեղենող ,  
 Դու բեկի արնուտ ձեռքերը լգող . . .

Մէջտեղ նետւեցան հովիւն ու տէրտէր .  
 — Տեղդ նստի՛ր, Զարո, տեղդ, տնաւեր .  
 Ալսըր նա ռեսն է եւ տարիքն առած .  
 Ի՞նչ ես գազանի նման գազազած :  
 Զարոյին այդպէս մի խօսիր, այ ռե՛ս .  
 Կատովի է նա վարար գետի պէս .  
 Աչքին չերեւար ո՛չ մարդ, ոչ գազան  
 Երբ կուր ելնէ այդ սարի չորան :

Դադրեցաւ վէճը. բերին խորոված ,  
 Կարագ, մեղք ու սեր եւ քարմ լավաշ հաց ,  
 Ճառեր խօսւեցան, իղձեր խանդավառ՝  
 Հայոց աշխարհի «մեծ օրւա» համար :

Խսկ բարի հովիւն այժմէն կը տեսնէր  
 Վաղւա արիւնուտ, անմիտ կոիւներ .  
 Թշւառ հայն ելած սոված քրդի դէմ —  
 Դիակ եւ մոխիր եւ արցունք ու ֆէն :

Եւ իրն քւաց, որ այդ խորոված  
 Մեռելի մի՛ս էր իր առջեւ դրւած .  
 Ինքն ալ մի անարգ, անխիղն մարդասպան —  
 Սարսափէն գլխին քաշեց իր արան . . .

### VIII

Յուլիս է . պտղի եւ տապի շրջան ,  
Երբ երկինքն է վառ հնոցի նման .  
Եւ շոգ ձորերու միջով Շատախի  
Կը ծփա հունաքը եւ պատրաստ քաղի :

Արտերն ոսկեվարս , հովերէ ծածան՝  
Գետափին ելեր են մինչեւ կածան .  
Ու ծայրն են թառեր բարձր դարերուն  
Կորեկի ոսկի արտերը ծփուն :

Հանդերն են նախշուն՝ գորգի պէս շքեղ՝  
Շուրջը՝ ծառերու զմրխտի հեղեղ ,  
Եւ գետն , որ խոռվ եւ որոտաճայն  
Կը հոսի ահեղ բողոքի նման :



Երբ ծղրիքներու երգը զբնգուն  
Հնչեց արտերէն դեղնած հասկերուն ,  
Նորէն՝ յուսավառ եւ առանց հացի  
Հնձելու ելաւ ամեն գիւղացի . . .

### IX

Մուք էր . տակաւին հաւը չէր խօսած .  
Երբ դավաւլ-գուռնան հնչեցին յանկարծ .  
Արքնցաւ նիրկող գիւղը ցաւատանչ —  
Սրտին ծանրացած ցաւ ու մղաւանչ :  
Դեռ նախիրն անգամ սարը չի բացած .  
Դեռ ժամհարն ժամի դուռը չի բացած  
Արդէն գիւղն ամբողջ ինկեր էր նամբա —  
Բեկի հանդը կար այդ օր զուբարա<sup>(11)</sup> :

Հասուն հասկերու մի ծով էր անծայր .  
Որ անոնց դէմք մեղմով կը ծփար .  
Աղջիկ ու տղա , կին ու տղամարդ  
Պիտի հնձէին Ազիզ բեկի արտ :

Այդ ստրկական անխախտ մի հա՛րկ էր ,  
Որ գեղջուկն հնուց միշտ վճարած էր .  
Հազար տեսակի տուրքի հետ մէկտեղ՝  
Իր գոռ ու գազան տէրերուն ահեղ :

Որպէս զի հունաքը աւարտէր արագ  
Երկու թեւ կային եւ երկու՝ թանակ ,  
Որոնց միշեւ թեկն եւ անարգ իր տունն  
Ստեղծեր էին կատաղի մրցում :

Գիւղի ջոշերն ալ հայ — քուրդ հաւասար  
Կուգային վառել ցեղային պայքար .  
Թէ ո՞վ կը հնձէ իր բաժինն առաջ ,  
Ո՞ր ազգն է նարպիկ , ո՞ր մէկ ազգն է քաջ ,

Խսկ անոնք — զրկւած այդ գոյգ ժողովուրդ —  
Կողոպտւած հայը եւ խարւած այն քուրդ —  
Մըցման կելնէին ձիերու նման,  
Կամ ինչպէս մի գոյգ գոմէշներ կուան :

Կերգէին անվերջ դավուլն ու գուռնան .  
Մինչդեռ քեկն ու ռես, տէրտէրն ու մոլլան՝  
Բազմած ծառերու հանդարտ շուքին տակ՝  
կընէին գրոյց եւ խաղ ու կատակ :

Արեւը հուր էր եւ օրը երկար .  
Ու կը հնձէին անոնք անդադար .  
Ցոգնած նւագէ, յորդորէ զգւած՝  
Կը հնձէր անդուլ ամբոխն այդ անհաց :

Թեկը կայցելէր երթեմն քուրդ բաժին,  
Որոնք քրտնաքախ եւ միշտ անբաժին՝  
Ծառայեր էին վայրի տէրերու .  
Զէնիւրի համար որ շատ էր հեռու :  
Երկիւղած գլուխ կուտային բոլոր  
Երրոր երեւար գոռ քեկն ալեւոր .  
Որ ի՞նչ է իրենց այդ կեանքը դաժան  
Չի դառնար դժբախտ մի հազար անգամ :

Հայերուն կերքար քեկը ողորմած .  
Անոնք միշտ խոնարի եւ ահարեկած ,  
Լուռ կը դատէին — դառն ու քրտնաքոր —  
Միայն քեկն իրենց չի նայէր խոժոն :

Եւ կը հնձէին հրդեհի նման,  
Որպէս բարձրացող հեղեղը յորդան —  
Այն սարսափալար երկու ժողովուրդ —  
Մէկը՝ հայ գեղջուկն ու միւսն՝ անբախտ քուրդ :

Հասկերու ծովը ետ ետ մղեցին

Եւ ելաւ դեղին մի մարգագետին .  
Ուր ոսկի մի հօս փուած կարածէր —  
Խարտեաշ հասկերու հօտը բոցահեր :

Նոր Զուրարա կար վաղն ալ ռեսի արտ .  
Յետո Աստուծոն համար մանաւանդ .  
Մինչ հունձի պայծառ արեւն կրահեր  
Կայրէր գիւղացու հասունցած արտեր :

Երբ աստղերու հետ տուն կը դառնային .  
Ալեւոր Զնդին ըստ Զեյլային .

— Ի՞նչ ողորմելի սարուկնե՛ր ենք մենք  
Որ այս ամենը անխօս կը տանենք :  
Երկու ժողովուրդ ենք — երկու՝ բանակ .  
Նո՞յն տիրոջ կլու, մէկմէկու՝ ներհակ .  
Ու մեր տանջանքէն, ֆաղցէն կատաղած  
Ժանիք ենք սրեր իրարու դիմաց :

(11) Զուրարա — Բոնի, անվճար համայնական աշխատանք

## X

- Քո աջին մեռնիմ, գրա՛ ինձ, տէրտէ՛ր,  
Ես օր ու գիշեր կրակն եմ ինկեր,  
Ու կը խորովիմ, շամփուրն եմ զարկւած.  
Ո՞ր մեղքիս համար ինձ պատժեց Աստւած:  
Դուռ ու դրացուն ենք ծաղր ու ծանակ,  
Ամբողջ աշխարհի առջեւ՝ խայտառակ.  
Չարք անցեր է որդուս առջեւէն  
Եւ նա վազ չի գար այդ յիմար սէրէն:  
Տէրտէ՛ր, դո՞ւ խօսիր անօրէն տղիս.  
Այս բարկ կրակէն ազատիր եռգիս.  
Յիշեցուր գիշենն ու կարի կարաս,  
Կամուրջը մազի եւ գետն փրփրալազ:  
Գուցէ վախենա եւ թողնէ իր եար,  
Եւ նոր օր ծագի իր խեղն մօր համար,  
Ու բաց նակատով ես դուրս գամ նորէն:  
Առանց կարմբելու հայէն ու քրդէն:  
  
Ու ուսին գնաց ցաւատանց Սանամ.  
Եւ պետին հայոց յեղափոխութեան,  
Որ երթան խօսին իր գժւած տղին —  
Որ թողնէ սիրո այդ մոլար ուղին:  
  
Իսկ Զարոն այդ սէգ սարերու նման  
Մնաց անյօդդողդ, մնաց անսասան.  
  
— Ես ո՛չ չարչի եմ եւ ո՛չ վաշխառու.  
Մանկութեանս սէրը չեմ հաներ ծախու . . .

## XI

Բերտորներն վաղուց գիւղն էին դարձած,  
Գառները հեռու արօտներ ելած,  
Եւ կախւեր էին շուքերն իրիկւան  
Հին հէֆեաքներու դեւերու նման:

Մի ժայռէ բխող աղբիւրի ափին  
Նստեր էր Զարոն՝ սրինգը բերնին.  
Եւ այն կարկաչող ջրի պէս վճիտ  
Կը հոսէր անոր երգը մարգարիտ:

— Երգըս ձեզի, մարմանդ հովեր,  
Հեւքըս ձե՛զի, կանաչ սարեր.  
Ձեզ, արօտներ եւ մատղաշ ջո՛ւր,  
Ձեզ, գառներու հօտըս գրգուր:

Սիրտըս եռ'կ է, սիրտըս ծո՛վ է,  
Սիրտս ամրջա՛նք, անհուն քո՛վ է.  
Սիրտըս ծի՛լ է, վառ փրթեր է,  
Սիրտս նունուֆար, անմեռ սէ՛ր է:

Հայրենի սա՛ր, զառ բազմեր ես,  
Զրիդ երգով ինձ կը կանչես.  
Ես արծի՛ւ եմ սիրո թեւով —  
Թունեմ երթամ իմ եարիս քով:

Օրօ՛ր գառներ, օրօ՛ր սարեր,  
Սրտիս մի նոր օ՛ր է ծագեր.  
Երբ մութն իջնէ, լոկ աշխարհ՝  
Սիրտըս երգեր ունի պայծառ:

— Զարո՞ն՝, ա՞յ Զարո՞ն՝

— Հե՞յ շան, է՞յ Զէյլա՞ն . . .

Չքացեր էին շուտերն իրիկւա.  
Ու զով մթնշաղն իջեր էր մեղմով  
Որպէս բուրմունի, գգւանի մի ծով :

Եւ անոնք ինկան գիրկը մէկմէկու՝  
Ինչպէս հողմավար քոչունեներ երկու,  
Որոնք ահաւոր փոքրկէ մը վերջ  
Կողջունեն զիրար հարաւ դաշտի մէջ :

— Նստիր իմ Զէյլա — իմ յոգնած եղնիկ,  
Եւ քող զրնգա քո ոսկի ձէնիկ.  
Եւ ապրիմ սիրո ժաղցր անրջանք —  
Մոոցած եւ աշխարհն ու օր ու տանջանք :

— Զարո՛, իմ հզօր, չինարի ծառ ես,  
Դու արեւի պէս վառ ու պայծառ ես.  
Թող դնեմ գլուխս այդ թիկնեղ ուսիդ  
Եւ մտիկ ընեմ դիւրական երգիդ,  
Ինձ շա՞տ են տանջեր լեզուները չար.  
Ա՛յս շատ են դաղեր սիրտըս չարաչար.  
Կուզեմ ես մոռնալ մի պահ ամեն բան —  
Անվերջ քունն ու մուրն ու լացըս դաժան :

— Կարգ չէ այս, Զէյլա, այլ հոտած դիակ,  
Լացի ու արեան մի նեխած գետակ,  
Ուր տեղ անունով կրօնի, ազգի  
Բաժներ են աշխարհն անքիւ բանակի :  
Որ անոնք առնեն զէնք մէկ մէկու դէմ,  
Որ անոնք զիրար տան ու ջարդեն,  
Եւ շւայտ ապրին մեր տէրերն ահեղ՝  
Ծաղրելով մեր ցաւն ու արեան հեղեղ :

Ես դուրս պիտի գամ բուռն եւ համարձակ,  
Ուր կա գիւղացի, բանոր կամ մշակ,  
Եւ ըսեմ անոնց՝ իմ շան, իմ աղբեր,  
Ինչո՞ւ միմեանց դէմ կուի էֆ ելեր :  
Ի՞նչ է մնացեր որ պիտի բաժնէֆ —  
Լոկ լաց ու զրկանք եւ շդքա ու վէրք .  
Մոոնանք մենք ժամը, մոոնանք մենք շամին  
Եւ մի նար ընենք մեր անտէր շանին :  
Զէ՛ որ մենք միայն զրկանք ենք տեսած,  
Դառըն աշխատած ու դատարկ նստած .  
Թէ որ սրտով ենք ու քաջ տղամարդ —  
Մեր տէրերու դէմ պիտի վարենք մարտ :

— Զարո՛ իմ կտրին, քեզ ողջ չեն քողներ,  
Քո բուրդը քամուն կուտան այդ շներ .  
Ես ալ կը մնամ սգաւոր ուրու  
Զարդւած դիակիդ վրա ողբալու :

— Մի լար, իմ Զէյլա, մի լար իմ անգին,  
Խելքի պիտի գա ունչքարն իր կարգին .  
Եւ կուռ շարքերով ու միախորհուրդ՝  
Պիտի ազատէ ամեն ժողովուրդ :

Բայց Զէյլան կուլար բուռն ու անխնա  
Կարծես իր եարի դիակի վրա .  
Կուլար, կանիծէր կարգերն այն յիմար,  
Ու սէրը անգամ տանջանք էր անմար :

— Յիշիր դու անյաղը Դաւիթը Սասնա .  
Զրկած եւ անող գիւղացին է նա,  
Որ պիտի զարնէ քուրն իր կայծակին  
Մեր զոռ տէրերու յանցապարտ կրծքին :

## XII

Քաղը վերջացաւ . կալի շրջա՛նն էր .  
Հեռու սարերէ , արտերէ անբեր  
Գեղջուկն իր բերքը կալ բերաւ մէջքով  
Մի կտոր հացի պայծառ տեսիլքով :

Եկեր էր արդէն ահարկու շահնան<sup>(12)</sup>  
Ժողովու ննջիչ հարկը տէրութեան .  
Հոն էր Ազիգ բեկ , անսիրտ վաշխառուն ,  
Տէրտէրն ու հայոց յեղափոխութիւն :

Կերգէր կալէ կալ զրկած գիւղացին .  
— Կան արի , ա՛յ եզ , մեռնիս քո կանին .  
Երբոր կալն ելնի — ինծի քող ցորեն ,  
Ցարդն ալ կը պահեմ ենց ձմրան պարէն :

Կա՛լն ելաւ . շահնան տարաւ տասնին մէկ .  
Երկուքն ալ տարաւ անսիրտ Ազիգ բեկ .  
Մէկին տեղ երեք առաւ վաշխառուն .  
Բաժին մ'ալ տւին անյայտ աստղծուն :  
Խմբապետն եկաւ ու զէնքի հաշուին  
Առաւ այն բերքի մնացած բաժին .  
Կալին մէջ միայն հոգս ու յարդ մնաց ,  
Եւ անհուն քախիծ եւ օրեր անհաց :

Նա՛ , որ յուսավառ հողերն էր հերկած ,  
Գիշերներն անելուն իր ցանքն էր պահած ,  
Հասկերն էր օծած առաւ քրտինքով —  
Տուն դարձաւ անյոյս եւ դատարկ ձեռքով :

Դեռ ձիւնը չեկած — քաղաքի նամբան  
Պիտի նետուէր նա հառաչի նման .  
Ու գրաստի պէս նա ձմեռն ամբողջ  
Պիտի ծառայէր հասած բիրտ տիրոջ —

Որ առկայծ վառէր նրագն իր հէզ տան .  
Ականջին չի գար ողբը իր կնկան .  
Ու կանուխ գարնան նորէն երթար հանդ .  
Ի զուր վատնելու իր ուժն ու եռամդ :

(12) Շահնան — կառավարութեան կողմէ բերքերու  
հարկահաւաքը

### XIII

Դարբին Ավոն շա՛տ հող ունեկը,  
Եզ ու ջրի եւ ոչխարներ.  
Ունեկը հազար մեղքի փերակ,  
Քա՛նի հոտաղ, քա՛նի մշակ:  
Շուրջը ունեկը եօթը որդի՝  
Շեն որպէս ոսկի գօտի.  
Եւ սալն անոր միշտ կը զնգար  
Կռելով խոփ, բահ ու մանգաղ:

Նա՛ էր միակ վարպետ դարբին  
Մի քառասուն գիւղի միշին.  
Շա՛տ յարգ ունեկը, անո՞ւն ունեկը —  
Մեծ համբաւի ու ոսկու՝ տէր:

Ու մէկ հատիկ աղջիկ ունեկը՝  
Ծաւի աչքով ու շիկահեր,  
Պահւած աչքի լոյսի նման  
Ինչպէս բարդի ելած փարքամ:

Անոր տան մօս՝ խարխուլ, քշւառ՝  
Քուրդ Հասոյի խրճիքը կար.  
Կինը — Խաչէն ալ հացրերան  
Գործերն կընէկը Ավոյի տան:

Եւ Ռաշիդը — Փոքր տղան —  
Մօր հետ կուգար իբր օգնական.  
Ու Մարոյի հետ անդադար  
Երգ կը կամչէր ու կը խաղար:

Նա ձայն ունէկը մեղքածորան՝  
Յորդ ջրերու երգի նման.  
Կերգէր վէպէր — «Լէյլի-Մէջնուն»,  
«Խաչազարէն» ու «Սասմա տուն»:

Անոր յառած անհուն աչքեր՝  
Մարոն յուգւած մտիկ կընէկը.  
Թէ ի՞նչ քաջ էր այն մրայոն  
Շեղ հեծեալն՝ Սիամանքոն։  
Կամ ի՞նչ մեծ էր Մէջնունի սէր,  
Որ Լէյլային սպասեր էր  
Ալարդավառէն մինչեւ գարուն  
Լճի ափին՝ անհաց, անտուն։  
Կամ ոնց հեծած հրեղէն ձին,  
Զեռքը բռնած քուր — կայծակին՝  
Սասմա Դաւիթ կուի կերքար  
Խեղն գիւղացու դատի համար։

Ա՛յ, մանկութիւն դու լուսաբեւ,  
Արծւէն՝ արագ, հովէն՝ քերեւ  
Կանցնիս կերքաս անվերադարձ —  
Խաղ ու երազ անհետ փշրած։



Վրնչան արաք ձիերու նման՝  
Անցան տարիներ անմեղ մանկութեան.  
Բայց դեռ Մարոյի յուշերուն մէջ վառ  
Ռաշիդի ոսկի ձայնը կը զնգար։

Իրեն կը քւէր որ վէպերն այդ հին —  
Սիրով կարկաչուն, հեւբով՝ ողբագին  
Ռաշիդն իրական կեանքէ էր հիւսած՝  
Ցաւով ու լացով ու արիւնով քա'ց :

Եւ ի՞նչ է սէրը — կարօտ, յիշատակ .  
Ցաւէտ բռնկող բոցեղէն փափաք,  
Որի դէմ կրօնն ու անսիրտ տէրեր՝  
Ահեղ ու անհաս պատւար են քաշեր :

#### XIV

Մարոն՝ հիւսած ժամը դեղձան՝  
Ճակտին՝ ոսկի, զգէն՝ մերջան՝  
Ժամը կերքար իր մօր կողքէն  
Կաբւի նման շորորալէն :  
Երք մքնշաղն կիշնէր խաղաղ .  
Մարոն ժամէն տուն կը դառնար .  
Լուսնակն ինչպէս սարի տակին՝  
Վառ ժպիտը աղտոք դէմքին :

Ու Մարոյին՝ քա՛նի մէկ մայր՝  
Հարս էր ուզեր որդու համար .  
Մէկին՝ «ապշիկ չունինք տալու ,»  
Մէկին՝ «չենք տար աղքատ մարդու ,»  
Մէկին՝ «դեռ փոքր է երախան»  
Տին վճիռն ու պատասխան .  
Եւ սեւ սրտով նամբեցին տուն .  
— Տէրը մեռնի, աղքատութի՛ւն . . .

Բայց հէնց եկաւ կինը ուսին  
«Տիրոջ կամքն է եղեր ըսին,  
«Որ զոյգ տներն մեր հնամի  
«Լինեն սիրով եւ խնամի» :



Եւ մեծ շուբով — պարով, խաղով,  
Թէ հայ քէ քուրդ երգով, տաղով,

Սիրուն Մարռն նշանեցին  
Ուս Յովանի քոքով տղին :

Եկաւ բեկը վայել փառքով .  
Եկաւ , նստաւ Յովանի քով .  
«ԱՇ ուս ըստ , այդ ի՞նչ մալ է ,  
ԱՇդ ինչ կամաւ ու մարալ է» :

Տէրտէրն ըստ , «Յովան , օրինա՛ծ ,  
«Տունը միշտ շեն պահէ Աստուա՛ծ ,  
«Հարսրդ նախուն եղունիկ է ,  
«Ուկի թեւով քիրեռնիկ է . . .»

Մոլլան ըստ , «Գրոտ քէռխվա՛ ,  
Հզօր տունըդ կանգուն մնա ,  
«Ալլահն պահէ ազիզ որդիդ  
«Ու չի պակսի հացը տաշտիդ» :

Գզիրն եկաւ շատերու ենտ  
Ողջունելու իր տէրն ու պետ .  
«Թող որ անի քիւը քո տան ,  
«Աքրահամու ցեղի նման» :



Բոներ էր գիւղի հինաւուրց մեյդան  
Բազմութիւնը մեծ՝ խեղն , զրկած դասին .  
Կը հնչէր անվերջ հարց ու պատասխան  
Խոսեցեալներու եւ սիրո մասին :

- Ինչո՞ւ Աւայի աշկերտ Միերին ,  
«Աղջիկը փոքր է» ըսին , չի տւին .
- Ինչո՞ւ թողոյինց էն հոտաղ տղին  
«Աղքատի աղջիկ չեմ տար» վնոնցին :

— Ուկի որ կտրի էդ ուսի որդին  
Արժեքը չունի անոնց եղբնգին . —  
Մի աղքատ ունեցրար տւաւ պատասխան .  
Եւ անոր խօսին ամբոխն էր հաւան :

- Իմ աղբե՛ր , ըսաւ ծերունի Զնդին ,  
Այսպէս է հիմա կարգը աշխարքին .  
Մեր ժողովրդի իմաստուն խօսքով ,  
«Ուլն՝ իրեն ոտքով , գառն՝ իրեն ոտքով» —
- Բայց սէրը սրտի քա՛ն է , ա՛յ Զնդի .
- Խսկ նա հարուստ է եւ ուսի որդի .  
Ու քանի դեռ կան այս կարգն ու բարքեր —  
Աղքատ մարդն ունի ո՛չ պատիւ , ո՛չ սէր . . .



Ռաշիդն էր եկեր ու կերգէր յուզրած՝  
Հէյրան - Հէյրանի կարօտը անսանձ ,  
Եւ սէրը անոնց անմահ ու բուրեան  
Անցեալէն փրքող ծաղկոցի նման :

- Հէյրա՛ն , Հէյրա՛ն . . .
- էն սեւ քարէն որ ջուր կուգա ,  
է՛ն իմ սիրտն է — արիւն կուլա .  
Ամպն , որ կախւեր քուլա քուլա ,  
էն իմ դարտն է սրտիս վրա :
- Զէյրա՛ն , Զէյրա՛ն . . .
- Դու հազարան բլբուլի պէս  
Հոգուս մէջն ես բացեր պարտէգ .  
Ուր քո սէրը միշտ անքառամ  
Պիտի ծաղկի վարդի նման :

Այդ շեղ ձայնը Մարոն կը կանչէր,  
Մարոյի համար երգն այդ կը հնչէր.  
Իսկ Մարոն զապած հեկեկանքն ու լաց  
Շարբարի թասը ձեռքէն դրաւ ցած:



Հիւրերը բոլոր մէկ մէկ հեռացան.  
Զարկաւ գիշերն իր աստղահիւս վրան.  
Ու մանկութ սէրը հոգու մէջ անմար՝  
Մարոն մուրի մէջ դեռ կը հեկեկար:

Եւ առաւ մայրը գլուխն աղջրկան  
Ուսկերել բանած իր ուսին վրան.

- Սեւաւո՞ր աղջիկ, բաւ է արտասևս,  
Բա՛ւ է մըի մէջ արեւըդ մաշես.  
Մեր գլխին բո՞ւ ես դարձեր դու գումկան,  
Սեւ պիտի բերես տանըդ հայրական:  
Ի՞նչ եղաւ ֆեղի, չար ա՞չ դպաւ ֆեղ.  
Ըսէ՛, մէկ հատիկս, դու ի՞նչ դարտ ունես:
- Մատաղցու գա՞ռն եմ իմ ծնած օրէն,  
Սեւ բախտըս գրած — կապած իմ վզէն.  
Հազիւ բացեցա վառ վարդի նման  
Ինձ նղակոտոր ըրին ու տարան:
- Սո՞ւս եղիր, աղջիկ, մեղա՞ ֆեղ, Աստւած.  
Ա՛յ, դու ապերախտ, դու ծամբ կտրած.  
Ո՞ր մէկ աղջիկն է ֆեղ պէս բախտաւոր —  
Ռեսի հարսնցուն — հայրըդ՝ ունեւոր:
- Զիւկը այդ տունը եւ իմ հօր ոսկին  
Որին զոհ կերպա իմ կեանքն ու հոգին:

Ես ոչ մանգաղ եմ, ո՛չ խոփ, ոչ կացին,  
Որ տանեն ծախսն հասած գնողին:

- Մարո՛ այդ կա՛րգն է, Աստրծու պատւէր.  
Ադամի օրէն այդպէս է եղեր  
Ու պիտի երթա յալիտեան այդպէս  
մի չար դիպւածի, փչող ֆամու պէս:  
Բոլորս ալ ունինք մեր նակատագիր —  
Առանձին նամրա, տարբեր վազք ու ծիր,  
Եւ նա է արդար, նա է իմաստուն  
Որ կապրի հլու միշտ իր մեծերուն:
- Բայց սա՛ իմ գիրը սե՛ւ է, մայր անգին.  
Սիրտըս՝ փշրած կուժ՝ վառ սիրոյս նամրին.  
Ի՞նչ ընեմ ես այս ֆանդւած սրտիս հետ.  
Աչքերս դարձեր են պղտոր լացի գետ:



Շատ էր կարօտցած Մարոն Ռաշիդին,  
Ցուզուղ եւ թախծու այն աղւոր դէմքին.  
Ինչե՛ր չէր տար որ իր կողքին, նորէն,  
Քակէր նա վէպի իր դիւքիչ հիւսկէն:  
Բայց մտֆերուն մէջ դաշոյնի նման  
Միւտած էր իր հօր պատւէրը դաժան.  
«Թէ մէկ ալ խօսիս այդ լակոտի հետ,  
«Կը կտրեմ լեզուդ, կը նետեմ ֆեղ գետ»:

- Թուչուն լինէի եւ թեւ առնէի,  
Ռաշիդի բանած հանդը թոնէի.  
Նստէի ուսին, մնչէի անոր —  
«Շա՛տ եմ կարօտեր ֆե՞ղ իմ հեռաւոր»:



Մարոյի դէմքը հուր ու արեւ էր,  
Մարոյի աչքերն՝ ահարկու նետեր.  
Ուշիդն ալ սիրոն էր բռներ արիւնոս՝  
Հոգուն մէջ թախիծ եւ անհուն կարօս :

Գուցէ Մարոն ալ այն լինէր իրեն  
հ'նչ եղան Լէյլան ու Խաջազարէն՝  
Անրախտ Մէջնունին, Սիամանքոյին —  
Բոցեղէն մի սէր եւ մա՞հ ցաւագին :

Ու կեանքն ալ, որ կա, մի անյայտ օ՛ր է .  
Մէկին մուժ՝ մէկին ալ լուսաւոր է .  
Աւելի արժէ մի սիրո վայրկեան  
Քան մոայլ, անսէր մի մեծ յաւիտեան :

Գժւե՛ր էր արդեօֆ, այն ո՛վ էր լսեր  
Այսպիսի յիմար — անհնար մի սէր .  
Զէ՛ որ նշանած աղջիկ էր Մարոն —  
Երկուքի միջեւ կար ազգ ու կրօն . . .

Բայց սէրն ալ որ կա տե՛նչ է բոցակէզ —  
Հրեղէն թռչուն դիւրիչ, իրագէս .  
Քաղցր ու ահարկու, աննար պատուհաս,  
Յաւիտեան՝ անմեռ, յաւիտեան անհաս :

## XV

Դավուլ — զուռնա հնչեցուցին,  
Ալջիկ, տղա կայնեցուցին,  
Եւ սկսաւ գւարք շուրջպար —  
Բեկի տունը այն օր ճա՛շ կար :

Հի՛ւըն էր տանիկ գաւառապետ,  
Օգնականի եւ օօրքի հետ .  
Որ գեղջուկներն լաւ իմանան  
Անեղ ուժը թիւրք տէրութեան :

Դրեր էին հարուստ սեղան՝  
Հազար սեսակ բարիք վրան .  
Հաւ, սեր ու մեղը ու խորոված —  
Մրգեր, շարբար եւ լավաշ հաց :

Եւ մեծ հիւրի, բեկի համար  
Դեռ կը դառնար լեռնական պար —  
Աշխոյժ ինչպէս փրփրուն գետակ,  
Ծփանքներու պէս ներդաշնակ :

Ապա երգեց Ռաշիդն աղւոր —  
Վկապերէն հին, երգերէն նոր —  
Ինչպէս սարէն կարկաչող ջո՛ւր,  
Պաղատանքի նման՝ տխուր :

Մարոն յուզւած մտիկ կընէր .  
Երգ չէր կարծես — այլ հասնում էր .  
Անոր ջահել սի՛րտն էր ըսես  
Քակւեր արևոտ կծիկի պէս :

Երգ չէ՛ր — ցաւ ու հեծեծա՛նի էր .  
Իր խենք սիրո արձագանքն էր .  
Եւ անզուսպ լացն աչքերն խուժած՝  
Դուրս նետւեցաւ Մարոն յանկարծ :



Խոկ գիւղի մէջ ողբ ու ծեծ կար .  
Ամեն մէկ տան մէկ մէկ ասկեար  
Բաժին հանած էր ուս Յովան —  
Մէկ մէկ իշխան, մէկ մէկ գաղան :

— Դէ՛, հա՛ւ բերէ՛ք, փիլա՛ւ բերէ՛ք,  
Զիերուն խո՛տ, գա՛րի բերէ՛ք,  
Հարսը բռդ գա, շոկէ սեղան,  
Բարձե՛ր բերէ՛ք, նստեմ վրան : —

Ու կսկսէր տո՛ւր ու տիոց  
Եւ աղաղակ եւ լաց ու կոծ .  
Ու մինչեւ լոյս՝ սարսափահար  
Անոնց աչքին քունը չէր գար :

## XVI

Գետի այն կողմը, ուր անտառն էր խիտ,  
Մարոյին գուաւ իր սիրած Ռաշիդ .  
Եւ մեղմով դպաւ այն ֆնքուշ ուսին —  
Լացող Մարոյի վարարող ուսին —  
Գիշերն՝ բուրմունք էր, բոլոր էր լուսնակ .  
Եւ գետը բաշովն իր փրփրակուտակ՝  
Կարշաւէր խոռվ՝ մի երգով ահեղ —  
Անոնք դէմ դէմի կանգնած սիրազեղ :  
Եւ գրկախառնում, եւ ժպիտ ու լաց —  
Երկու հրաբուխ մէկին բռնկած .  
Եւ այդ բոցավառ, բուռն սիրո առաջ  
Եւ վախ, եւ կապանք ըրեր են նահանջ :

— Ա՛լ ետ չենք դառնար մեր տառապանքին,  
Չենք զոհեր մեր սէրն ուրիշի կամքին —  
Ըսին եւ առին փախուստի նամբան,  
Հեռու, անմասոյց մի բարձունք հասան :  
Վիր-խարի ժայռեր ելած չորս բոլոր,  
Վարն ամբունքն էին ու ձորերը խոր .  
Մենաւոր մի ծառ եւ մի պաղ աղբիւր —  
Դաշն որպէս սրինգ — սիրո պէս մաքուր :  
Վարը՝ արածող գառներն ու ոչխար՝  
Փուած վզնոցի պէս մարգարտաշար .  
Եւ Զարոն՝ առած սրինգը բերան՝  
Կածէր իր սիրո տրսում շարական :  
Մի ժայռի նեղքէն գիւղը կերեւար,  
Եւ ծուխն, որ կելնէր մեղմ ու օդապար .  
Հեռու, ձորն ի վար գետի լոյժ իրան՝

Գալարւած հսկա մի օձի նման :

Ուաշիդը վճռեց Զարոյին երբալ  
Եւ իրեն սիրո գիրքն անոր բանալ .  
Իրնեց վիճակին նա՛ կը հասկնա —  
Զէ՛ որ ողջ գիւղի դէմ ցցւեր էր նա .

Մարոն սրտատրափ՝ վերէն կը դիտէր .  
Ե՛տ կանչեց Զարոն յարձակող շներ .  
Սրտագին ողջոյն . . . խօսքերու հեղեղ —  
Քաշւեցան տակաւ մի զով , ծածուկ տեղ :

- Ռաշի՛դ իմ աղքեր , շատ է դժւարին  
Անսովոր սիրո այս անկյուն ուղին .  
Ես ալ կը բայեմ — սակայն ամեն օր  
Հոգիս կը խոցեն իժերն քունաւոր :
- Դէ՛ , անշուշտ մի օր կը լուեն կիրքեր —  
Եւ գիւղ կը դառնենք — աղքատ տունը մեր .  
Եւ կամ կը զարնենք կերպանք մինչեւ Վան  
Այն տեղ նարելու գործ ու ապաստան :
- Բարով դուք հասմէք ձեր նպատակին ,  
Բա՛ց է ձեզ համար իմ սիրտն ու հոգին :
- Աստւած քո սրտի համաձայն տա քեզ ,  
Բարով վառ սիրուդ , մուրադիդ հասնես . . .
- Ետ դարձաւ Ռաշիդ՝ հետը հաց ու կար  
Եւ յոյս եւ կորով եւ սէր խանդակար .  
Ու մի ողջ շարաք այս վէս բարձունքին  
Խսնցին անոնք սիրո հուր գինին :
- Գգւանք ու խաղեր . . . յետո խօսքեր լուրջ .  
Ծովափնեան քաղաք . . . եւ շքեղ անուրջ .

Թախիծ ու հատնում . . . վախ ու հեկեկանք .  
Ու նորէն համբոյր ու նորէն գգւանք . . .



Երկինքն էր վլեկ ծեր ուսի գլխին —  
Իր տան հարսնցուն վախա՛ծ քրդի հետ .  
Զէ՛ նա իր որդուն ալ չէր յարմար կին ,  
Օժի՛տ քէ տային անոր ոսկի գետ :

Եւ կինը նամբեց — նշանն ուզեց ե՛տ ,  
Որ իր տան պատիւն անաղարտ մնար .  
Պատի՛ւն , որ նա եւ պապերն իր բանգէտ  
Շահեր էին բիրտ բռնուրեամբ յաման :

Ավոն կատղեր էր , Ավոն էր գազան —  
Զար ու ոլսակալ , վայրագ ու դաժան .  
Իսկ մայրն ալ անվերջ կուլար ու կըսէր ,  
«Մարոյիս մեռնեմ , սո՛ւրք է անոր սէր . . .»

Ժողով սարքեցին պետերը հայոց՝  
Սրտերը կրքի , վրէժի հնոց .  
Պէտք էր Ռաշիդը՝ նոխազը դառնար  
Հայ կնոջ պատի սրբուրեան համար :  
Տէրտէրը բերաւ խաչն , Աւետարան .  
Ու երդում ըրքն — մի երդում դաժան —  
Իրենց ուսերէն գէնիք չի դնել վար  
Մինչեւ Ռաշիդի մքնէր օրը վառ :

Իսկ պառաւ Խաչէն իր տունն էր մտած՝  
Սիրտը մորմունքով եւ ահով պատած .  
«Այս ի՛նչ ձիւն բերիր , մօրդ գլխին , որդի՛ ,  
իմ ոսկի ձայնով , զան իգիք որդի՛» :



Եւ դաժան մի մէզ իշեր էր զիւղին,  
Իշեր, ծածկեր էր հանդերն եւ ուղին.  
Մէզի մէջ երկու ազգեր հարեւան  
Զայրութով ելած միմեանց հանդիման :



Մի տղա անսիրտ ու նենգ որպէս օձ՝  
Տեսած էր անոնց սարի քագսոց .  
Եւ հայ զոչերուն պատմած էր իսկոյն —  
Խումբն ելաւ նամբա ադամա մքուն :  
Եւ սարի կողէն՝ գողերու նման՝  
Զգոյշ եւ անձայն ժայռերը ելան :  
Ազրիւրի ակին, այն ծառի տակին  
Փուած էր անոնց խոտէ անկողին :

Վեր ցատկեց Ռաշիդ, տեսաւ լուսնի տակ  
Մի խումբ՝ ձեռքն առած զէնքեր ու դանակ՝  
Վատօրէն իրենց վրա կը խուժէր :  
Մարոն ալ արդէն ոտքի էր ելեր :

Զէնքի մի պայքուն . . . ու Մարոն նչաց,  
Ռաշիդն էր ինկեր կուրծքէն զարնւած .  
Խլած Ռաշիդի արկւնու դաշոյն՝  
Խմբի դէմ ցատկեց հէզ Մարոն իսկոյն :

Մէկալ ժարացած կեցաւ լուսնի տակ՝  
Հոգին սարսափի մի ծով անյատակ .

«Հայե՞ր են, կանչեց, դրացի, նանչու՞ր . . .  
«Կուրծքս ալ պատռեցէք, սի՞րսս ալ վիրաւոր :  
«Զեզ ի՞նչ էր ըրած ա՛յս շեն տղան,  
«Աղքատ այս մշակն ու լաւ հարեւան .  
«Հայ կնոջ պատիմ քէ փրկել կուզէք —  
«Բեկի դէմ պէտք էր ուղղէիք ձեր զէնք» :

Մէկ մը Ռաշիդի վրա կը նետուէր,  
Մէկ մը իր արձակ մազը կը փետուէր .  
«Վե՞ր կաց, ժաղցրախօս իմ կտրին Ռաշիդ,  
«Վե՞ր կաց, ես մեռմիմ կանաչ արեւիդ» :

Եւ այս անպաշտպան աղջկա դիմաց  
Կայնած էր խումբը շփոք ու պարուած.  
Խսկ նա լալագին եւ խելացնոր  
Կը դառնար անդուլ ցնցումով մի նոր :

Ա'լ բաւ է Մարո՛, ճչաց խմբավետ,  
Ի՞նչ ունիս քրդի այս լակոտի հետ.  
Շո՛ւն է ազգն անոր եւ քունաւոր ի՛ժ.  
Աստրծուն մեռնիմ, գուաւ իր պատիժ :  
Վա՛ս է քո լացը եւ վիշտդ՝ տգեղ,  
Գետին կը մտնէր ով լինէր քո տեղ .  
Անգղերուն յանձնէ դու քո սիրական —  
Բլրուկի ճայնով այդ լիրք սրիկան :  
Խսկ դո՛ւ ժամ գնա, աղօթիք ու լա՛ց,  
Գուցէ քեզ գքա ողորմած Աստւած  
Եւ սրբէ անջինց մուրք նակատէդ,  
Այն որ հօրդ տանը քնեցիր յաւէտ :

Մարոն նայեցաւ մի պահ այդ խմբին,  
Մէկ ալ իր անշունչ պատկող Ռաշիդին,  
Կարծեց գայլերու վայրագ վոհմակն էր  
Ունալով իրենց վրա յարծակւեր :

Ու ե՛տ, ե՛տ փախաւ՝ գայլերն ետեւէն .  
Մէկն իրեն հասաւ ու բռնեց փեշէն .  
Մարոն՝ սարսափին, ցաւէն խելագար՝  
Իր կուրծքը խրեց դաշոյնն այն պայծառ :



Երբոր բացւեցաւ ոսկի լուսարաց՝  
Գիւղին մէջ փրքաւ աղաղակ ու լաց .  
Երկու ծեր մայրեր սեւ լաքեր հագան,  
Երկու ժողովուրդ միմեանց դէմ ելան :

## XVII

Մերկ ու վիթխարի մի ծեր ապառած  
Կախւեր է դալար մի մարգի վրա,  
Ուրկէ կը բղլսի աղբերակ մը խած,  
Շուրջն ալ՝ դարաւոր մի անտառ հսկա :  
Ապառածի տակ՝ քարակոյսերէ  
Ելած է մի պատ կիվլոպեան դարի .  
Հոն՝ գիշերները գայլէ, գողերէ  
Կը պատսպարւէր հօտը ոչխարի :

Այնտե՛ղ էր նորէն հօտը մակաղած՝  
Այն խարտեաշ աշնան խաւար գիշերով .  
Հովիւն ու Զարոն դէմ դէմի նստած՝  
Վառւող խարոյկի ոսկեփայլ լոյսով :

Եւ մի ֆիշ հեռու շները արքուն՝  
Աշքերով մուրը կը խուզարկէին .  
Մտիկ ընելավ հովի սոյլերուն,  
Անտառի հետքին եւ գետի երգին :  
Վառւող խարոյկի բոցերու ներքեւ  
Բոնկեր էին դէմֆերն այդ երկու՝  
Ցնցող յուզմունքէն դէպֆերուն այն սեւ  
Եւ մքով գործւած ոճրին ահարկու :

Ա՛յ իմ ժողովուրդ, դարերով տանշւած,  
Դու ինչո՞ւ մտար անմեղ արեան տակ .  
Այդպիսի ոնիր վէպով են երգած —  
Այդպէս ահաւոր եւ անօրինակ :

Հաւատա՛, հովիւ, այնտեղ լինէի  
կուրծքը կընէի ևս ամուր վահան,  
Քարով, բռունցքով կը ջախջախէի  
Գանկերն անոնց չար, ձեռքերն մարդասպան :  
Ա' ի՞նչ երեսով մէկմէկու նայինք,  
Եւ ինչպէ՞ս ուստեմ մենք իրարու հա .  
Մեր հոգուն իջած ծանր նախատինք,  
Ալ ո՞չ հարեւան, ո՞չ նանչոր մնաց :

— Եւ այդ սկիզբն է, լոկ, Զարո՛, որդի,  
Այսօր մքի մէջ կը մղենք պայքար .  
Վաղը լույսով է որ կուինք պիտի —  
Արեան ծովի մէջ խեղդելու զիրար : —

Շները յանկարծ տեղէն ցատկեցին  
Եւ կատաղօրէն առաջ նետւեցան .  
Հովիւն ու Զարոն մի ժայռի ետին  
Մտան՝ սեղմելով իրենց իրացան :  
Այն կողմն, ուր շներն էին յարակած՝  
Պայքեցան գենքեր, ե՛ւ կանչ, ե՛ւ աղմուկ .  
Մինչ դիրքի ետեւ սողալով կամաց  
Մի խումբ կայնեցան մքի մէջ ծածուկ :  
Եւ մէկէն զարկող կայծակի նման  
Իջան հարւածներ անխնան եւ շատ .  
Դժբախտ հովիւներն՝ նոյնիսկ չի կրցան  
Թշնամու դէմ գալ նակատ — առ նակատ :

Եւ դիրքերու մէջ՝ զարդած, արիւնոտ  
Ու մարած բռնին հովիւներն արի .  
Քշեցին, տարան գիւղի անտէր հօտ  
Մքին կողերէ այն Արնոս սարի :

Վիրաւոր Զարոն երը եկաւ ուշքի .  
Զգաց որ ձեռքը դատարկ էր ու պա՛ռ .

Դէմքն էր ողողւած արիւնով վէրքի,  
Մօտն ալ հովիւը պառկեր էր խաղաղ :

Եւ յիշեց արագ դարձող դէպքերն այն —  
Շներու հաջոցն ու զէնքի պայքիւն,  
Վազքը դէպի դիրք՝ ձեռքին իրացան,  
Մի ծանր հարւած . . . ապա լուուքի՛ւն :  
Շուրջը նայեցաւ . դեռ խարոյկն էր վառ՝  
Պայծառ բայց շիջող մի յոյսի նման,  
Եւ մուրն էր կախւեր ծանր որպէս կապար,  
Կը լսւէր միայն աղբիւրն ողբածայն :

Գրկեց հովիւը, տարաւ զրի մօտ —  
Խարոյկի լոյսը վրան էր գարկեր,  
Լաւց վէրքերը եւ դէմքն արիւնոտ  
Մինչեւ նա մեղմով բացաւ իր աչքեր :  
Վէրքերու վրա դրին խանձրած բուրդ  
Եւ շապիկներէն առին վիրակապ .

— Գինա՛ արքնցուր գիւղն ու ժողովուրդ,  
Վազի՛ր, Զարո ջան, դէ՛, վազի՛ր շտապ . . .  
Գողը տնէն է — այն ալ տանուտէր .  
Անեն քայլ կարգին չափւած ու ձեւած .  
Բայց նա չո՛րս ոտքով քակարդն է ինկեր,  
Եւ անկէ պիտի չելնէ անկասկած : —



Հավա՛ր ելէֆ, հօ՛տը տարան . . .  
Կանչեց Զարոն ձայնով ուժգին .  
Ու տնէ տուն «տարա՛ն, տարա՛ն»  
Հնչեց տխուր, ողորմագին :

Ո՛վ գէնիք ունէր — գէ՛նիք առաւ հետ .  
Ո՛վ գէնիք չունիք — բահ ու մանգաղ,

Ելաւ որպէս մի վարար գետ  
Ժողովուրդն այն հեզ ու խաղաղ :

Երբոք հասան ծեր հովկի մօտ՝  
Նա զայրոյթէն նստած կուլար,  
Բարի դէմքը դեռ արիւնու,  
Եւ ջարդըւած եւ ուժասպան :

— Բաց կա միայն երկու նամբա —  
Մէկը՝ հովտէն դէպի Բարվար,  
Մէկն ալ ուղին է այն Տափա  
Արնոս սարէն՝ Մոկաց աշխարի :

Զարո՛, Տափա ուղին դու առ  
Քաջերու հետ արագ, անվախ .  
Մենք ալ կիշնենք դէպ զառ ի վար  
Մեզ հետ առած բահ ու մանգաղ :



Զարոն հետն առաւ ժառսուն տղամարդ  
Թէ հայ եւ թէ ժուրդ առանց խորութեան,  
Ճամբան զառ ի վեր, ճամբան էր անհարք —  
Ու կը վագէին փոք-որկի նման :

Բլրի մը վրա իր Զալոն տեսաւ —  
Իր հաւատարիմ եւ հուժկու շունը,  
Լեզուն՝ դուրս իմկած, արիւնաբարաւ,  
Կոպերուն շա՛տ մօտ՝ անվախնան ժունը :  
Զարոն որ տեսաւ կաղկանձեց տխուր  
Եւ հազիւ շարժեց իր պոչը բրդոտ .  
Ուզեց վեր կենալ — բայց աւա՛զ, ի զուր .  
Ու Զարոն նստաւ իր մեռնող շան մօտ :

Սարի ետեւէն ելած էր լուսին .  
Երկութի աչքէն արցունիք էր կախւած .  
Մէկն էր անձնատուր տխուր օրհասին ,  
Մէկն ալ յուշերու կծիկն էր ժակած :

Եւ քողին Զալոն այն բլրի կատար,  
Ու սարի հովը շնչանգա օրօ՛ր .  
Նա կեանքն էր զոհած գիւղացու համար —  
Մի պայֆարի մէջ գոռ ու ահաւոր :



— Ինչո՞ւ ժանգոս է ամեն մէկիդ դէմք,  
Ինչո՞ւ դուք բաժան — բաժան կը ժալէք —  
Քրդերը՝ մէկ խումբ եւ հայերը՝ մէկ —  
Ա՛յդ է որ կուզեն արդէն ուսն ու բեկ :  
Մեր միշեւ դիա՛կ, մեր միշեւ արիւն  
Նետեր է անգուր եւ անարգ մի ձեռք .  
Ա՛յդ դժբախտ տո՞ւրքն է մեր նենգ տէրերուն —  
Որ զերեն մեր կեանքն ու խլեն մեր բերք :  
Թէ որ մենք հօսք ետ պիտի խլենք  
Հերոսներու պէս՝ մեր կեանքի զնով ,  
Մենք «զա՛ն» կանչելով՝ մա՛րս պիտի մղենք  
Եւ ընկնենք սիրո յաղբական ժպտո՛վ . . .

Վերջին կատա՛րն էր եւ վերջին՝ կածան  
Դէպի այն կողմը սէգ Արնոս սարի .  
Երբ հեռու, հովտի միշին երեւցան  
Երկա՛ր շարաններ քշող ոչխարի :  
Զարոն պատրաստեց ուազմի ծրագիր .  
Բաժնեց ընկերներն երկու խմբերու .

— Տահի՛ր, դու սարի լանշէն յարձակիր,  
Մհե՛ր, բուքի պէս բիկունիքն զարկ դո՛ւ .

Ես ալ Մոկաց կիրճ կիշնեմ իմ խմբով .  
կը կտրենք փախի միակ նանապարհ .  
Ժայռերու մէջէն , ծառերու շուրջով  
Թշնամու վրա կելնենք աննշմա՞ր :

Ըստ . համբուրեց ամենք մի առ մի .  
Ու բոլորն ընկան մէկ մէկու վզով .  
Եւ արագ՝ որպէս փայլակ ու ժամի՝  
Կուի դիմեցին առուա լոյսով :

Գիւղի դարաւոր կեանքի ընթացքին  
Այսպէս փառաւոր կոիւ չէր եղեր ,  
Այդպէս կորո՞վի , այդպէս մոլեգին  
Զրոյց իսկ չունին գիւղի աշուղներ :

Գողերն յուսահատ եւ բուռն կուեցան ,  
Բայց ալ դիմադրել իրենց հնար չէր .

— Քա՞շ է՞ ու հզօր , ձեր զանին դուրքան  
Մենք վար կը դնենք մեր անզօր զենքեր :

Կանչեց մի դիրքէ Զավուշ Սուլէյման —  
Անգէն ու ձեռքը վէրքերէն կարմիր —

— Այս , մեզ գող ըրաւ կարիքը մեր տան  
Թող մեր երեսին ք-քէ ողջ երկիր :—

Յաղթական խումբը — Զարոն՝ խմբավետ —  
Զինաքափ ըրին գողերն այդ ք-շառ .  
Քշեցին քերին գիւղի հօտին հետ՝  
Գերիներն այդ խեղն ու լեղապատռ :

▲  
կէսօ՞ր էր արդէն , երք նորէն ոչխար  
Շուռ դպաւ դէպի ծանօթ արօտներ .  
Ու գիւղն հրնւանքէն , յոյզէն խելագար՝  
Մէկ մը կը պարէր , մէկ մ'ալ կարտասէր :

— Իմ արե՛ւ վկա , խօսեցաւ Մհեր ,  
Միութիւնն ոք կա մեծ է եւ հզօր .  
Գիւղացին այսպէս քշառ չէր լիներ  
Թէ իր քշամին նանաչէր մի օր :

## XVIII

Գիւղ դարձան Զարոն եւ իր ընկերներ  
հնչպէս յաղքական զօրք ու զօրավար .  
ժողովուրդն ամբողջ դէմն էր գնացեր՝  
հանդակաք սիրով, ցնծութեամբ վարար :

Երբ հասան գիւղի մեծ հրապարակ՝  
Զարոն բարձրացաւ մի քարի վրա .  
Շուրջը մարդկային բարձրացող կոհակ .  
Կանչեց յուզմունիքով —

— Իմ աղբեր, բրա՞ . . .  
Մենք բոլորս՝ ունչքար, մենք բոլորս քշառ,  
Դատեր ենք դառըն՝ անհաշիւ դարեր .  
Դատեր ենք բեկի, տէրութեան համար,  
Մեր ձեռքը՝ դառարկ, մեր տունը՝ աւեր :  
Որքա՞ն եղեր ենք մենք խոհեմ ու լուռ  
Մեր քեռն է եղած աւելի ննչիչ :  
Մեր լացն ու քրտինք քափեր ենք ի զո՞ւր,  
Մեր ականջի մէջ է մեռեր մեր նիչ :

Երէկ հունաք ըրինք ու ժողւեցինք բերք,  
Ո՞րի տուն մտաւ մի բուռ իսկ ցորեն .  
Մենք խելագարւած զիրար կսպաննենք —  
Երբ մեր մանուկներն «հա՞ց, հա՞ց» կաղերսեն :  
Դոներու շէմֆին՝ սեւ հագած մայրեր,  
Եւ մեր ձեռքին մէջ արիւնոտ դաշոյն .  
Իսկ բեկը այսքան արեան անտարբեր,  
Կը ցանէ մեր մէջ նոր կոխ ու քոյն :

- Հերի՛ք է ոռնաս քաղցած շան նման —  
Կանչեց զայրագին բեկի մէկ ծառան . . .
- Լոկ մահը կրնա կապել իմ լեզուն,  
Ո՞ւր մնաց բեկի դռան կապւած շո՞ւն . . .
- Ելան քեզ գիւղի հովիւ կարգեցին,  
Որ դու պատուհա՞ս դառնաս մեր գլխին —  
Գոռաց ամբոխէն մի հայ ազգասէր .  
Ու շարունակեց Զարոն անտարբեր՝
- Մեր դասի համար, մեր հացի համար  
Մէկսեղ կոււցանիք — քէ հայ եւ քէ քուրդ .  
Այդ մեր տէրերուն բնաւ դիւր չի գար . —  
Այդ լա՞ւ իմացիր, տանջւած ժողովուրդ :  
Ո՞վ էր ոք տարաւ ոչխարք սարէն . —  
Գողերու մի խո՞ւմք, քշնամի մի ցե՞ղ,  
Ո՞չ . մեր ոք գիւղի տէրերն անօրէն . —  
Մեր ուս Յովանը — Ազիզ բեկն ահեղ :
- Կատղած մի խմբակ վայրագ աղմուկով  
Զարոյի վրա յարձակւիլ փորձեց,  
Բայց ժողովուրդը՝ բրով ու ձեռքով՝  
Այդ խմբին տւաւ փառաւոր մի ծեծ :
- Կանգնած էր Զէյլան ծեր Զնդու կողքին .  
Անսահման յուզմունիք իր աղւոր դէմֆին .  
Իսկ պառաւ Սանամ՝ ժամը ծնրադիր,  
Աստըծուն կընէր աղօրք ու խնդիր :
- Դեռ երբէք մէկի չեմ խօսած ես չար .  
Բեկին ու ուսին ես չեմ զրպարտեր .  
Ինչ ոք եղեր է քոզ գիւնա աշխարհ,  
Տահի՛ք, այստեղ բեր դու մեր գերիներ . . .

Եւ ժողովուրդը լուռ, արձանացած  
Կը դիտէր գողերն այն սարսափահար .  
Անո՞նք ալ այդ խեղն գիւղն էին ծնած —  
Իրենց պէս զրկւած, իրենց պէս բշւառ :  
Բոլո՞րն ալ ծանօթ ու չարքաշ մարդեր,  
Ամենն ալ ֆաղցած քէ հայ եւ քէ քուրդ .  
«Ի՞նչ դեւ էր զանոնք աւազակ ըրեր»  
Հարց կուտար գիւղի շշմած ժողովուրդ :

Խօսեցաւ յուգւած, ալեխառն մի մարդ,  
Ամենին ծանօթ Զավուշ Սուլէյման .

— Ի՞նչ որ մենիք ըրինք անսի՞րտ էր — նամարդ .  
Ինչպէ՞ս ես ըրի այս սոսկալի բան . . .

Այս տարի հունաքէն ինձ բան չի մնաց .  
Բեկին ու ռեսին իմ բախտը լացի,  
Ըսին . «քալանիր, քեզի կուտանք հաց» .  
Տո՞ւնս անօրի էր, ու ես զնացի . . .

Չի մտածեցի — ո՞վ տարաւ իմ քերք,  
Ո՞վ խլեց պտուղն իմ դառն վաստակի,  
Զարո՛, օրինւէր հզօր քո այդ ձեռք,  
Անոր հարւածն էր ինձ քերաւ ուշքի :

Դեռ հերիք չէին այն հողերն ընտիր,  
Որ խլեր էին գիւղացու ձեռքէն,  
Բաւ չէին այնին հօտերն ու նախիր,  
Եւ մեծ բաժինը գիւղացու քերքէն,  
Հիմա ալ ինձ պէս անբախտ մարդերով  
Կը գողնան գիւղի ապրուստը վերջին .  
Որ մեր դռներուն նստին հոգսն ու սով  
Ու հացի համար ծախսն մեր հոգին : —

Կը վազէր լացը այտերէն իր վար  
Կրակի այրող դառնութեամբ վարար .  
Անոր հետ կուլար ամբոխն այդ աննար՝  
Իր ողորմելի, որք կեանքի համար :

— Մենիք շա՞տ ենիք լացեր, գոռաց Սուլէյման,  
Ա՛լ ժամն է հասեր բռունցքի, գարկի .  
Ելնե՞նիք, ժողովո՞ւրդ, կուռ ու միաբան՝  
Ուժով տէր դառնանիք մեր կեանքի, ինչքի :  
Ելնենիք մեր պատոիք, մեր հացի համար —  
Մենիք հիմա ո՞չ հա՛ց ունինիք, ոչ՝ պատիւ .  
Մէկտեղ մենիք քաջ ենիք հզօր, անհամա՛ր,  
Մեր շարքերը՝ կուռ մեր շարքերն՝ անքիւ :

«Երքա՞նիք» նչաց ծերուկ Զնդին,  
«Երքա՞նիք» կանչեց մի պառաւ կին :  
Եւ մարդ ու կին, տղա ու ծեր  
Բուռն ու անզուսպ եւ անհամբեր՝  
Պահանջեցին «Երքա՞նիք, երքանիք . . .»

Մահակ ու զէնիք, բահ ու կացին  
Կը նոնային սպառնագին .  
Կորած էր քէն, կորած էր ա՛հ,  
Եւ ժողովուրդն մեծ ու անմահ  
Ելաւ կուի կարմիր նամբա :

## XIX

Առջեւէն ինկած Զարոն ու Զավուշ՝  
Բազմութիւնն՝ որպէս բարձրացող հեղեղ՝  
Փոքորկած մի նոր խենքութեամբ անուշ՝  
Կարշաւէր դէպի բեկի տունն ու տեղ :

Ինչպէս որ կելնէ բուքը ահաւոր՝  
Սշնան տերեւներն էշելու համար,  
Ելած էր ամբոյն այն հեղեղաւոր —  
Երէկի ստրուկն ու ոենցքարը համբ :

Կանգներ էր շենք այդ հզօր հսկան՝  
Տէրերու լուծէն եւ երկիւղէն զերծ.  
Ցցեր էր ահեղ եւ սպառնական  
Հարւածող բազուկն իր շղթայազերծ :

Գոռ բեկն էր նստեր վերի պատշգամ.  
«Ի՞նչ է պատահեր» նա կը մտածէր.  
«Կամ ապերախտ են եւ կամ անզգամ  
«Այս ողորմելի եւ երկշոտ նորտեր» :

— Պետո՛, տղաքը դու պատրաստ պահիր  
Այս ծուերու հետ ընենք մի քիչ խաղ.  
Ներկենք բլուրը արիւնով կարմիր,  
Որ սովորին լինել խելօֆ ու խաղաղ . . .

Եւ կը բարձրանար ամբոյն այն յուգաւած՝  
Ինչպէս ովկեամբ մըրկի պահին .

Երբ բեկի վարձկան ուժերը յանկարծ՝  
Ծածուկ տեղերէ խիստ կրակ բացին :  
Կանգ առաւ ամբոյն ինչպէս մի կոհակ,  
Որ պիտի նետուի ժայռերու դիմաց .  
Ճոճացին ուժգին բահերն ու մահակ .  
Նորէն սկսաւ բուռն առաջախաղաց :

Ու վերքը կրծքին՝ վարդերու նման՝  
Այն գոռ կուին մէջ քանինե՛ր ինկան .  
Բայց ոչինչ կրցաւ փակել արշաւն այն՝  
Այդ հեղեղաշունչ, ահեղ բազմութեան :

Երբ մութը իշաւ, նորէն . այն գիշեր  
Մարա՛ծ էր արդէն աստղը բեկի տան .  
Հետն առած ոեսը, ինչժերն ու յուշեր՝  
Սարի այն կողմն էր գուած ապաստան :

Լոյսը չի բացւած՝ մեծ տո՛ւնն էր լիւած՝  
Անհնար ու վառ երազի նման .  
Սարսափի նման՝ դոներն էին բաց,  
Ամեն կողմ դեռ բաց՝ հետժերը արեան :

Բացին ամբաթներն հսկա ցորենի  
Եւ մառամն՝ իւզով ու մեղրով յորդան .  
Բաժին հանցին ամեն մէկ տունի  
Գոյժերը ոեսի, Ազիզ բեկի տան :

Քանդեցին ամեն դուռ ու պատռահան,  
Յետու հրդեհի տուին այդ տներ .  
Բայց անոնք՝ որպէս բռնութեան նշան՝  
Սեւցած պատերով կանգուն էին դեռ :

XX

Զէին խմած — գինով էին,  
Հարսնիվ չկար — կը պարկին.  
Եւ կը զնգար քաղէ ի քաղ  
Հպարտ գիւղի երգն ու ծիծաղ :

Աշուն էր խաժ ու գունագեղ —  
Վառ գոյներու դիւքիչ հեղեղ,  
Եւ սարերու սէց կատարին  
Նոր էր իջեր ձիւնն առաջին :

Հաւաքւեր էր գիւղի մէյդան  
Ամբոխն այն ժաղ ու յաղթական .  
Եւ քրվուն ու խելայեղ  
Թափ էր տուեր պարը շեղ :

— Ելէֆ, տեսէֆ  
Ո՞վ է կերեր մեր էծը —  
Կրան, չալիկ մեր էծը :

— Ելան տեսան  
Գէլն է կերեր մեր էծը —  
Կրան, չալիկ մեր էծը :

Էծն էր սարին,  
Թուփն էր դարին,  
Գէլն էր քփին  
Թփի տակին —  
Տարաւ էծը բռնած վզէն .

Ա'ն, չի բացւէր էս տարին  
Մեր վրէն, մեր վրէն :

— Ելէֆ, տեսէֆ  
Ո՞վ է զարկեր էն գէլը,  
Չար ու անսիրտ էն գէլը :

— Ելան տեսան  
Քաջն էր զարկեր էն գէլը,  
Չար ու անսիրտ էն գէլը :

Էծն էր սարին,  
Թուփն էր դարին,  
Գէլն էր քփին  
Էծի բըկին .  
Քաջը զարկաւ անսիրտ գէլը .  
Բարով բացւէր էս տարին  
Մեր վրէն, մեր վրէն :—

Յետոն հնչեց էն քրվուան  
Սիրո պարը — «Զա՛ն, մարալ, զան» :

— Զարոն քո՛ղ գա պարը վարի  
Շեղ բոյնվն իր չինարի,

— Արի, Զէյլա՛, ա՛ո քո մուրադ,  
Զարոյի հետ պարէ հպարտ :

Զոյգ խումբ էին կազմեր հիմա  
Մէկը՝ աղջիկ, մէկն ալ տղա .  
Եւ դէմ դէմի ծափ – քափ տալով  
Մէկ կուգային իրարու քով .  
Մէկ ալ շորոր կերքային եւ  
Բոժոժներու զնզոցի հետ :

- Զա՞ն, մարալ, զա՞ն,  
Սարի տակէն ջուր կուգա,  
Զան, մարա՛լ, զան,  
Աղջիկ տղին դիւր կուգա.
- Զա՞ն, մարալ, զա՞ն,  
Ես աղբիւրն եմ — դու ջուրն ես.  
Զան, մարա՛լ, զան,  
Ես՝ գլուխմ, դու խմես :
- Զա՞ն, մարալ, զա՞ն,  
Բոյիդ մեռնիմ — չինար է .  
Զան, մարա՛լ, զան,  
Դեմքը՝ արեւ ու վառ է . . .
- Զա՞ն, մարալ, զա՞ն,  
Անհաս, լուսեղէն հա՛նի ես,  
Զան, մարա՛լ, զան,  
Անմար բոցէ փափա՛ն ես . . .



Անեց պարը թափով, խինդով  
Խնչվէս ծիան, ծիծուն մի ծով.  
Հոգս ու տարիի, քէն մոռացած  
Գիւղը բոլոր՝ պար էր բռնած :

Երգեր կային, գովեր պայծառ  
Յաղբող գիւղի փառքի համար.  
Կըսէին թէ եւ ո՛չ ոֆի  
Գիւղը պիտի ալ ծունկ չոֆի :

Զարոն՝ հետն ալ գիւղի ժաշեր,  
Շէն ու շեն կը պարէր դեռ .

Եւ մայրերն ալ կը փափսային  
«Հազա՛ր երնեկ ժեզ սիրողին» :

Աղջիկներն ալ ծափ ու երգով  
Պար կուգային որպէս գեփիւռ,  
Շրբները՝ նուռ, կախու տոտով,  
Աշերն՝ արեւ, սրտերը՝ հուր :

Սիրուն Զէյլա, մարալ աղջիկ,  
Զա՞ն վառ սիրուդ, երազի՛դ,  
Շէկիկ Զարոն՝, հզօր մարտիկ  
Բարով հասնես մուրազիդ :

Ըսին կոյսերն ու պա՛ր եկան —  
Գիւղը կայնած հանդիսատես.  
Ու շիկնեցաւ, սիրուն Զէյլան՝  
Բափուր վարդի ու նոսն պէս :

Պարը շուտով դարձաւ շուրջպար՝  
Աղջիկ — տղա կապած շրջան.  
Երբէ՛ այդպէս շէն ու պայծառ  
Զէր աղմկած գիւղի մէյդան :

Կանչեց Զարոն —

Է՛յ ժողովուրդ,  
Է՛յ ունչքարներ, թէ հայ թէ ժուրդ.  
Էծը, որ կար, այն մեր գիւղն էր,  
Գէլը, որ կար, Ազիզ թէկն էր:  
Այն ծեր գէլը այս մէկ անգամ  
Տեսաւ կոտոշն մեր յաղբական  
Եւ պոչը՝ կախ եւ վիզը՝ ծուռ  
Կծիկ դրաւ շփոք, տխուր :

«Ազգային գրադարան



NL0363220

Բայց նա կուգա վաղը կրկին  
Հետ գէերու մեծ վոհմակին .  
Նորէն կոտոշ թէ ցոյց չի տանք ,  
Մեր գըլուխն ալ վրա կուտանք :

Ելնենք վազւա կուի համար  
Մենք միաբան եւ զինավառ .  
Եւ վա՞յ անոր , ով որ մեր մէջ  
Փուշ կը ցանէ եւ ֆէն ու վէն . . .



— Հոյնա՞ր , հոյնար  
Մենք ոչ ոքէ չենք վախենար .  
Հոյնար , հոյնար —  
Ապրի վաղւա մեր գոռ պայքար :

Կը պարէին այն տղաներ  
Արեւէն դեռ դէմքերը քուխ .  
Եւ ողջ գիւղն ալ պար էր բոներ —  
Զարոն անոնց պարագլուխ :







ՀՀ Ազգային գրադարան



NL0363219

1/2 4227

55200